

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԻՆԵ ԳԱՌՆԻԿԻ**

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԺԲ.00.01 (Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,  
իրավական ուսմունքների պատմություն) մասնագիտությամբ  
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման համար ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2013**

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**

**ДАВТЯН НАРИНЕ ГАРНИКОВНА**

**ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРИКЛАДНЫЕ ПРОБЛЕМЫ  
ПРЕТВОРЕНИЯ (РЕАЛИЗАЦИИ) ПРАВА**

**АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени  
кандидата юридических наук по специальности  
12.00.01–«Теория и история государства и права;  
история правовых учений»

**Ереван-2013**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի «Գլաձոր» համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների  
դոկտոր, դոցենտ Ա. Վաղարշյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Հ. Ստեփանյան

իրավաբանական գիտությունների  
թեկնածու Վ. Օհանյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2013թ.-ի հունիսի 4-ին, ժամը 13<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղնագիրն առաքվել է 2013թ.-ի հունիսի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ

Ա. Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском университете “Гладзор”

Научный руководитель:

доктор юридических наук,  
доцент А. Вагаршян

Официальные оппоненты:

доктор юридических наук,  
профессор О. Степанян

кандидат юридических  
наук В. Оганян

Ведущая организация: Центр конституционного права РА

Защита состоится 4 июля 2013г., в 13<sup>00</sup> часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 4 июня 2013 г.

Ученый секретарь специализированного совета,  
доктор юридических наук, доцент

А.Г. Вагаршян

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի հետազոտության արդիականությունը:** Իրավագիտության զարգացմանը զուգընթաց ձևավորվել և զարգացել է տեսական իրավաբանության մաս կազմող «իրավունքի ռեալիզացիայի» տեսությունը: Լինելով իրավունքի տեսության կայացած մասերից մեկը, «իրավունքի ռեալիզացիա» գիտական հասկացությունն արդի պայմաններում չի կարելի համարել անվիճելի, իսկ այն արտացոլող տեսության մեջ բոլոր հարցերը լուծված: Առաջին հերթին հայաստանյան իրականության և իրավագիտության մեջ առաջ եկավ «իրավունքի ռեալիզացիայի» տեսության հայերեն եզրույթների հիմնահարցը: Հայերեն լեզվով «իրավունքի ռեալիզացիայի» տեսության եզրույթաբանական բառապաշարն ունի գիտական իմաստավորման և ճշգրտման կարիք, ինչը շատ կարևոր է, որովհետև գիտական հիմնախնդիրների լուծման առաջին նախադրյալը տրամաբանորեն շաղկապված ու ստորակարգված եզրույթաբանական բառապաշարն է: Բացի այդ, արդի շրջանում «իրավունքի ռեալիզացիա» գիտական հասկացությունը չի կարելի համարել միանշանակ ընդունված, իսկ այն արտացոլող տեսությունը՝ առանց բանավեճերի: Այդ տեսության որոշ տեսական տարածայնություններ նախորդ տարիներից փոխանցվել են մեր օրերը:

Մյուս կողմից խորհրդային իրավագիտությունը, որի օրոք էլ մեծամասամբ մշակվել է այդ տեսությունը, նորմատիվականության վրա կառուցված իրավագիտություն էր: Ներկայումս իրավագիտությունը մեծամասամբ թոթափել է մաքուր «օրենքականությունը», կանգնելով լայն իրավահասկացողության հիմքերի վրա: Նոր պայմաններում վերաիմաստավորման կարիք ունի նաև «իրավունքի ռեալիզացիայի» տեսությունը:

**Թեմայի ուսումնասիրության աստիճանը:** «Իրավունքի ռեալիզացիայի» տեսությունը ձևավորվել ու կայացել է իրավունքի ու պետության տեսության զարգացմանը զուգընթաց: Եթե ռուսական մինչխորհրդային և արևմտյան իրավագիտությունն իրավունքի տեսության շրջանակներում, գիտագործնական հիմնախնդիր էր համարում «իրավունքի գործողությունը», ապա խորհրդային իրավունքի տեսությունը հիմնավորեց «իրավունքի գործողություն» և «իրավունքի իրականացում (ռեալիզացիա)» հասկացությունների տարբերությունը և մշակեց «իրավունքի իրականացման (ռեալիզացիայի) տեսությունը»:

Խորհրդային իրավագիտությունը սկզբնական շրջանում ևս չէր քննարկում իրավունքի իրականացում տեսական հասկացությունը: Օրինակ՝ Մ. Ս. Ստրոգովիչը (Теория государства и права, М., 1949, էջ 413-489) հետևելով մինչսոցիալիստական իրավագիտության ավանդույթներին, քննարկման առարկա էր դարձնում միայն «իրավունքի գործողության» հիմնահարցը կամ պետական լիազորված մարմինների կողմից իրավունքի կիրառման (применение) տեսական հիմնախնդիրը, իսկ դրա շրջանակներում՝ իրավունքի գործողության (տարածությունում և ժամանակում, ըստ անցանց շրջանակի), իրավունքի մեկնաբանման հիմնահարցերը: Այդպիսին էին իրավունքի տեսաբանների դիրքորոշումները նաև եվրոպական իրավագիտության մեջ:

Իրավունքի իրականացման (կենսագործման) իրավաբանական բնույթի և առանձնահատկությունների հիմնահարցը մշակվեց գիտական բանավեճի ընթացքում, որն անցկացվեց 1954-55 թթ. և որի արդյունքները հրապարակվեցին «Советское государство и право» ամսագրում (1955, թիվ 3): Ղրանից հետո իրավունքի իրականացման տեսությունը զարգացրեցին Ն. Գ. Ալեքսանդրովը, Ս. Ս. Ալեքսենը, Վ. Մ. Գորչենևը, Ի. Դ. Ղյուրազինը, Վ. Վ. Լազարևը, Յ. Ս. Միխայլովը, Պ. Ե. Նեդբայուն, Ա. Ս. Պիգուլկինը, Մ. Ֆ. Ֆարբերը, Լ. Ս. Յավիչը և այլ հեղինակներ:

Այսպիսով, արդեն 1980-ական թթ. խորհրդային իրավունքի տեսության մեջ դրա կայացած մասերից մեկը «իրավունքի ռեալիզացիայի տեսությունն» էր: Միակ լուրջ բանավեճը, որ կար այդ տեսության մեջ, դա, իրավունքի իրականացման յուրահատուկ երկու ձևերի (իրավունքի իրականացումը իրավահարաբերությունների շրջանակում և իրավունքի իրականացումն իրավահարաբերություններից դուրս) վերաբերյալ տեսական տարածայնությունն էր:

**Հետազոտության տեսական և նորմատիվ հիմքերը:** Ատենախոսական աշխատանքի տեսական հիմք են պետության և իրավունքի տեսության, իրավունքի փիլիսոփայության և սոցիոլոգիայի հիմնախնդիրներին վերաբերող գիտական աշխատանքները, որոնցում արծարծված են «իրավունքի ռեալիզացիա» հասկացությունը և դրա հիմնահարցերը, իրավունքի կենսագործման փիլիսոփայական մոտեցումները, իրավաբանական իրավահասկացության հիմնահարցերի գիտական քննարկումները: Աշխատանքի բնույթով պայմանավորված դրա նորմատիվ հիմքերից են ՀՀ Սահմանդրությունը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, այլ օրենսդրական ակտեր:

**Ատենախոսական հետազոտության մեթոդաբանությունը:** Հետազոտության ընթացքում օգտագործվել են փիլիսոփայական-աշխարհայացքային մեթոդները, համագիտական տրամաբանական հնարքներն ու եղանակները: Լայնորեն կիրառվել են նաև իրավահամեմատական, համակարգային-կառուցվածքային վերլուծության, իրավաբանական վերլուծության և այլ գիտական մեթոդներ:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Աշխատանքի նպատակն է բազմակողմանի հետազոտման ենթարկել «իրավունքի ռեալիզացիա» հասկացությունը, քննարկել այն իրավական կարգավորման փուլային կառույցի և իրավահասկացության խորապատկերում, մշակել արդի իրողություններին համահունչ իրավունքի կենսագործման հայեցակարգ: Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետազոտական հետևյալ խնդիրները.

- 1) վեր հանել իրավունքի իրականացման տեսության կայացման փուլերը,
- 2) ուսումնասիրել իրավունքի իրականացում իրավագիտական հասկացության արդի հայեցակարգերը և կատարել դրանց տիպաբանություն,
- 3) դիտարկել իրավունքի կենսագործումն իրավական կարգավորման համակարգում, ինչպես նաև իրավահասկացության տիպերի շրջանակում,
- 4) իրավունքի կենսագործումն հասկացությունը և տեսական կառույցը քննարկել իրավական կարգավորման կառուցակարգի փուլային համակարգում,
- 5) իրավաբանական իրավահասկացողության դիրքերից կառուցել իրավունքի կենսագործման տեսության որոշ հիմնահարցերի լուծման նոր մոտեցումներ և տալ դրա կառուցակարգային նկարագիրը,
- 6) ներպետական իրավական համակարգում իրավունքի կենսագործումը դիտարկել իրավունքի էության կամ գաղափարի, սկզբունքի նյութականացումն հասարակական հարաբերություններում,
- 7) սահմանել իրավունքի կենսագործման առաջին կառուցակարգի խնդիրները, հետազոտել այն՝ որպես իրավունքի ձևականացման (դրական իրավունքի վերածման) իրավական կառուցակարգ, դրա ենթափուլերը,
- 8) իմաստավորել անհատական իրավական կարգավորման, իրավաբանական անալոգիայի և դատական նախադեպի տեղն իրավունքի կենսագործման ներպետական կառուցակարգում,
- 9) սահմանել իրավունքի կենսագործման երկրորդ կառուցակարգի՝ իրավունքի իրականացման խնդիրները, հետազոտել այն որպես իրավունքն անմիջականորեն կամ միջնորդավորված կենսագործելու կառուցակարգ:

**Աստենախոսության գիտական նորույթը:** Աշխատանքում կատարվել է «իրավունքի ռեալիզացիայի» (իրականացման) տեսության հայեցակարգերի դասակարգում, վեր են հանվել դրանցից ամեն մեկին բնորոշ թերություններն ու առավելությունները, ձևակերպվել են իրավունքի կենսագործման տեսության հիմնախնդիրների լուծման մի շարք ուղենիշեր, որոնցով իրականացվել է իրավունքի կենսագործում գաղափարի հետազոտություն: Այդ հետազոտության միջոցով առաջադրվել է իրավունքի և օրենքի տարանջատման վրա կառուցված իրավունքի կենսագործման հայեցակարգ: Հիմնախնդրի նման հարթության վրա քննարկումն ունի գիտական նորույթ, զարգացնում է իրավունքի կենսագործման (իրականացման) վերաբերյալ տեսական պատկերացումները:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Իրավահասկացության նորմատիվիային, լեգիտական տիպերում իրավունքի կենսագործում հասկացությունն ունի սահմանափակ իմաստ և նշանակում է պաշտոնապես գործող դրական իրավունքի կենսագործում իրավահարաբերությունների սուբյեկտների վարքագծում: Իրավահասկացության իրավաբանական տիպերում, բացի վերը նշված իմաստով իրավունքի կենսագործումից, առաջ է գալիս խնդիր, որը ևս ընդգրկված է «իրավունքի կենսագործում» հասկացության տիրույթում, այն է՝ իրավունքը որպես գաղափար, սկզբունք, էություն կենսագործել իրավական ձևերում (աղբյուրներում), այնուհետև՝ իրավունքի սուբյեկտների իրական վարքագծում:

2. «Իրավունքի կենսագործում» գիտական կատեգորիայի ձևավորման և զարգացման քննարկումը, դրա հասկացման արդի տեսական մոտեցումների վեր հանումը և դասակարգումը, «իրավունքի կենսագործում» կատեգորիայի փիլիսոփայական-իրավական հարթության վրա վերլուծությունը, այն իրավահասկացողության դիրքերից քննարկելը, ինչպես նաև իրավական կարգավորման փուլային կառուցվածքում դիտարկելը հիմք են տալիս եզրակացնելու, որ խորհրդային իրավունքի տեսությունն իրավունքի կյանքում կենսագործվելու գործընթացը նշելու համար օգտագործում է իր հիմքով լատիներեն «реализация» հասկացությունը, որը հայերեն թարգմանվել և թարգմանվում է «իրավունքի իրացում»: Հետխորհրդային ժամանակաշրջանում հայոց լեզվի օտար եզրույթներից մաքրագործելու գործընթացի շրջանակներում սկսեցին օգտագործել «իրավունքի նորմերի իրագործում», «իրավաիրագործում», «իրավունքի կենսագործում», «դրական իրավունքի կենսագործում» կամ «պոզիտիվ իրավունքի իրականացում» բառակապակցությունները: Ավելի հիմնավորված է «իրավունքի կենսագործում» եզրույթը, որի տակ պետք է հասկանալ իրավունքի իրականություն դառնալը, իրականանալը (առարկայանալը), հասարակական կյանքում կենսագործվելը, իրագործվելը: «Իրավունքի իրականացում» եզրույթը տեղին է դրական իրավունքի կյանքում կենսագործվելու գործընթացը նշելու համար և այն «իրավունքի կենսագործում» հասկացության շրջանակներում ներառված ենթահասկացություն է:

3. Իրավունքի և օրենքի տարբերակման հայեցակարգի տեսանկյունից «իրավունքի կենսագործում» հասկացությունը ձեռք է բերում նոր բովանդակություն, ինչպես նաև ի հայտ են գալիս իրավունքի իրականացման նոր ձևեր: Արդյունքում տեսական հնարավորություն է առաջանում հիմնավորելու նոր իրավական հասկացություն՝ «**իրավունքի կենսագործման իրավաբանական կառուցակարգ**», որի բաղադրատարրերն են իրավունքի (էության) վերածումը դրական իրավունքի (ձևի) և դրական իրավունքի կենսագործումը հասարակական հարաբերություններում:

4. Իրավունքի կենսագործման միասնական կառուցակարգի առաջին բաղադ-

րամասն իրավունքի (որպես օբյեկտիվ էության, սկզբունքի կամ իդեայի) պահանջները դրական իրավունքի վերածելու, դրանց պաշտոնական նորմատիվ ձև տալու կառուցակարգն է, որի իրականացման ձևն իրավաստեղծագործությունն է:

Իրավունքի ձևականացման փուլերի առանձնացման չափանիշը կոնկրետ իրավական համակարգում իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգային ստորակարգությունն է: ՀՀ իրավական համակարգի օրինակով՝ հիմք ընդունելով մասնավոր իրավունքի ուլորտում իրավունքի ներպետական աղբյուրների ըստ իրավաբանական ուժի ստորակարգությունը, իրավունքի կենսագործման իրավական գործընթացում կարելի է առանձնացնել երեք փուլ: Առաջին փուլում տեղի է ունենում բնական կամ այլ կերպ հասկացված իրավունքի ամրագրում Սահմանադրության մեջ՝ իրավունքին սահմանադրական նորմատիվ ձև և ուժ տալու միջոցով (սահմանադրում): Օրինաստեղծագործությունն իրավունքի կենսագործման (ձևականացման) այն կառուցակարգն է, որը հաջորդում է սահմանադրմանը և որը որպես փուլ կոնկրետացնում է Սահմանադրության մեջ ամրագրված իրավունքը: Իրավունքի կենսագործման, դրան նորմատիվ ձև տալու երրորդ փուլը ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունն է, որը կոնկրետացման միջոցով (ձևով) կենսագործում է Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքը:

5. Իրավունքի կենսագործման կառուցակարգի առաջին ձևը իրավունքի կենսագործումն է իրավական ձևերում (աղբյուրներում): Իրավունքի ձևականացման (դրական իրավունքի վերածման) իրավական կառուցակարգին հաջորդում է դրական (պոզիտիվ) իրավունքի, օրենսդրության իրականացման կառուցակարգը: Այս վերջին կառուցակարգի գործողության արդյունքում իրավունքը կենսագործվում է իրավունքի սուբյեկտների վարքագծում, և իրավական կարգավորումը հասնում է իր նպատակին: Սակայն օրենքները և ենթաօրենսդրական ակտերը կարող են ունենալ բացեր, որոնց պատճառով առաջանում է իրավունքի էության կոնկրետացման և կենսագործման խնդիրը: Հետևաբար, իրավունքի էության կոնկրետացման գործընթացի հաջորդ աստիճանն իրավունքի բացերի լրացումն է անալոգիայի միջոցով:

6. Իրավաստեղծ նախադեպերը տեղավորվում են իրավունքի կենսագործման առաջին կառուցակարգում՝ իրավունքի ձևականացման կառուցակարգում: Հայաստանի իրավական համակարգում դասական նախադեպը առկա է միայն իրավունքի անալոգիայի դեպքում, երբ դատարանն իրավաստեղծ նախադեպի միջոցով ամրագրում է իրավունքի իր կողմից հասկացված էությունը: Այս դեպքում իրավունքի էության կենսագործումը նախադեպային ձևում և դատական իրավակիրառումը սերտաձած են, իրավակիրառման ընթացքում ստեղծված անհատական կանոնը ձեռք է բերում նորմատիվ նշանակություն հետագա դեպքերի համար: Մեկնաբանողական նախադեպերն իրավունքի ածանցյալ աղբյուրներ են, որովհետև իրավունքի կենսագործման-կիրառման գործընթացում իրավագոր սուբյեկտն օրենքի հիման վրա կոնկրետացնելով օրենքի դրույթները, միասնականացնում է դրա կենսագործման կարգը: Մեկնաբանողական նախադեպը չի ստեղծում իրավունք, այլ մեկնաբանում է օրենքով ամրագրված իրավունքի ընդհանուր, վերացարկված կանոնը՝ անհատական որոշակի անձանց և դեպքերի վերաբերյալ: Այս տեսակի նախադեպը իրավաստեղծագործության կառուցակարգում համարվում է օրենքը կոնկրետացնող իրավակիրառում, որն ունի ենթաօրենսդրական նշանակություն:

7. Դրական իրավունքի իրականացումն իրավունքի, դրա էությունն արտահայտող իրավական սկզբունքների, իրավական նորմերի համակցության կենսագործումն է, որը տեղի է ունենում իրավունքի սուբյեկտների փաստական իրավաչափ

վարքագծի միջոցով, ինչպես նաև իրավախախտողների նկատմամբ իրավական պատասխանատվության միջոցների կիրառմամբ: Դրական իրավունքի նորմերի իրականացումը պետք է պատկերացնել որպես իրավահարաբերությունների միջոցով իրավունքի իրականացում: Հակառակ տեսակետը հակասության մեջ է մտնում իրավահարաբերությունների տեսության հետ, ըստ որի ընդհանուր իրավահարաբերությունները ծագում են անմիջապես օրենքից: Հետևաբար, իրավունքի իրականացումը գործընթաց է, որն ընթանում է միայն իրավահարաբերությունների միջոցով:

8. Դրական իրավունքի իրականացման կառուցակարգը տրոհվում է երկու կառուցակարգերի՝ ա) իրավունքի իրագործման (իրավակիրագործման) կառուցակարգ, որը ներառում է իրավունքի իրականացման երեք անմիջական ձևերը՝ օգտագործումը, կատարումը, պահպանումը, բ) իրավունքի կիրառման (իրավակիրառման) կառուցակարգ:

9. Իրավական օրինականության հասկացության դիրքերից առաջադրվում է իրավունքի կիրառման նոր հատկանիշ. իրավակիրառման ընթացքում շարունակվում է նորմատիվ կարգավորման գործընթացը, որը սկսվել էր նախորդող իրավաստեղծագործության կառուցակարգում, սակայն կարիք ունի լրացման (անալոգիայի միջոցով, նախադեպի կայացման միջոցով) կամ էլ կատարելագործման՝ դատական բողոքարկման միջոցով:

Իրավակիրառական գործունեությունը հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունն է՝ ուղղված անհատական իրավաբանական գործերի քննությանը և լուծմանը, նորմատիվ ակտերի դրույթների (օրենքների) կենսագործմանը, որն ավարտվում է անհատական իրավական ակտի ընդունմամբ: Իրավակիրառման տեսակներն են՝ գործադիր իրավակիրառումը (իրավագործադրումը), իրավապահպանությունը (ներառյալ դատական), վերահսկողական-հսկողական, ինչպես նաև մեկնաբանողական գործունեությունը: Իրավագործադրումը՝ որպես իրավունքի կիրառման ձև, ունի իրավաապահովող նշանակություն: Իրավակիրառման իրավապահպան ձևը (ներառյալ արդարադատությունը) կապված է իրավական վեճի կամ իրավախախտման հետ: Պաշտոնական նորմատիվ մեկնաբանումն իրականացնում են օրենքով սահմանված հանրային մարմինները, շահագրգիռ սուբյեկտների դիմումի հիման վրա՝ կոնկրետացնելով սահմանադրության կամ այլ ակտերի դրույթները՝ առանց իրավագործադրման:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել պետության և իրավունքի տեսության, իրավունքի փիլիսոփայության և սոցիոլոգիայի դասընթացներում, հետագա գիտական հետազոտություններում: Դրանք կարող են նպաստել նաև իրավաստեղծ աշխատանքի իրավական կարգավորման կատարելագործմանը:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Աշխատանքը կատարվել է Գլաձոր համալսարանում, որտեղ իրականացվել է աշխատանքի քննարկումն ու երաշխավորումը: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք գիտական հոդվածներում, ինչպես նաև նրա կողմից Գլաձոր համալսարանում կարդացված զեկուցումներում:

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ցանկից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի առաջին գլխի՝ «Իրավունքի կենսագործում իրավագիտական

հասկացության հետազոտման փիլիսոփայական-մեթոդաբանական հիմունքները» **1-ին ենթագլխում** «Իրավունքի ռեալիզացիայի (իրականացման) տեսության ձևավորումը և կայացումը» հեղինակը հետևելով ընդհանուր պետաիրավական մտքի զարգացման պատմությանը, վեր է հանում իրավունքի ռեալիզացիայի (իրականացման) հիմնահարցի մշակման գիտական բանավեճի ընթացքը խորհրդային իրավագիտության մեջ՝ մինչև 1960-ական թթ.: Դրանից առաջ խորհրդային իրավագիտությունը չէր իմաստավորել իրավունքի ռեալիզացիա (իրականացում) տեսական հասկացությունը և հետևելով մինչսոցիալիստական իրավագիտության ավանդույթներին՝ քննարկման առարկա էր դարձնում միայն «իրավունքի գործողության» կամ պետական լիազորված մարմինների կողմից իրավունքի կիրառման (применение) տեսական հիմնախնդիրները, իսկ դրա շրջանակներում՝ իրավունքի գործողության (տարածությունում և ժամանակում, ըստ անցանց շրջանակի), իրավունքի մեկնաբանման հիմնահարցերը:

Խորհրդային տեսաբանների հիմնավորմամբ՝ իրավունքի իրականացումն իրավական կարգավորման շարժուն (դինամիկ), ակտիվ, իսկ օրենսդրությունը իրավական կարգավորման կայուն (ստատիկ) մասերն են: Իրավունքի իրականացումն իրավունքի գործողության դրսևորումը, մարմնավորումն է:

Տեսության մեջ օգտագործվող հիմնական եզրույթը գալիս է լատիներեն *realis* բառից, ինչը նշանակում է առարկայական, իսկ «ռեալիզացումը» իր հերթին՝ առարկայացում, նյութականացում: Իրավունքի վերաբերմամբ *realis* եզրույթի օգտագործման փիլիսոփայական նշանակությունը կայանում է այն բանում, որ իրավունքն իրենից ներկայացնում է հնարավորություն, ինչը դառնում է իրականություն միայն մարդու կենսական գործողությունների միջոցով: Հետևաբար, իրավունքի «ռեալիզացումը» իրավական կարգադրագրերի կենսագործումն է կյանքում իրավունքի սուբյեկտների վարքագծի միջոցով: «Ռեալիզացումը» ենթադրում է ինչ-որ բանի իրականացում, ինչ-որ պլանի, նախագծի, ծրագրի նկատառման անցկացում կյանքում: Այսպիսով, առաջին հիմնախնդիրը, որ պետք է լուծվի իրավունքի կյանքում նյութականանալու, կենսագործվելու տեսական մշակման հարցում, դա լատիներեն «*realis*» եզրույթի հայերեն համարժեքի ընտրությունն է, համարժեք, որ պետք է արտացոլի իրենում իրավունքի հնարավորությունից իրականության վերածվելու գործընթացը, իսկ այնուհետև մշակվելով դառնա իրավագիտական հասկացություն:

«Реализация права» հասկացությունը հայերեն սովորաբար թարգմանվում էր և հիմա էլ երբեմն թարգմանվում է «իրավունքի իրացում»: Սակայն հետխորհրդային ժամանակաշրջանում հայոց լեզվի օտար եզրույթներից մաքրագերծելու գործընթացի շրջանակներում սկսեցին օգտագործել «իրավունքի նորմերի իրագործում», «իրավաիրագործում» բառակապակցությունը: Որոշ հեղինակներ սկսեցին օգտագործել «իրավունքի կենսագործում» հասկացությունը: Մյուսները քննարկվող հիմնախնդիրը մատնանշելու համար օգտագործում են «պոզիտիվ իրավունքի կենսագործում» կամ «պոզիտիվ իրավունքի իրականացում» ձևակերպումները: Ատենախոսի կարծիքով, ճիշտ է օգտագործել «իրավունքի կենսագործում» եզրույթը, որի տակ պետք է հասկանալ իրավունքի և դրա նորմերի իրականություն դառնալը, իրականանալը (առարկայանալը), հասարակական կյանքում կենսագործվելը, իրագործվելը: «Իրավունքի իրականացում» եզրույթը տեղին է դրական իրավունքի կյանքում կենսագործվելու գործընթացը նշելու համար և, ինչպես կտեսնենք հետագայում, այն համարվում է «իրավունքի կենսագործում» հասկացության շրջանակներում ներառված ենթահասկացություն:

**Առաջին գլխի 2-րդ ենթագլխում** «Իրավունքի կենսագործում իրավագիտական



հասկացության արդի տեսական հայեցակարգերը (մոտեցումները)» հեղինակը կատարել է «իրավունքի իրականացման տեսության» հայեցակարգային վարկածների հետազոտություն, կատարել է դրանց տիպաբանությունը՝ հիմք ընդունելով իրավունքի և օրենքի տարբերակման չափանիշը: Այդ հիմքով առանձնացվել են իրավունքի կենսագործման (իրականացման) հայեցակարգերի հետևյալ տիպերը:

1) Ձևական-իրավաբանական կամ նորմատիվիստական հայեցակարգեր, որոնց հիմքում ընկած են իրավունքի ձևական, ոչ բովանդակային հասկացողությունները: Այս հայեցակարգի կողմնակից հեղինակները, շարունակելով խորհրդային իրավունքի տեսության ավանդույթները, «իրավունքի իրականացման տեսությունը» պատկերացնում և իմաստավորում են իրավաբանական դոգմատիկայի շրջանակներում՝ որպես դրական իրավունքի նորմերի կենսագործում կյանքում: Դրանից դուրս այս մոտեցման կողմնակիցներն իրավունքի կենսագործման հիմնախնդիր չեն տեսնում:

2) Իրավունքի կենսագործման (իրականացման) տեսության հայեցակարգեր, որոնց տեսաբանները կանգնած են իրավաբանական կամ իրավունքի և օրենքի տարանջատմամբ իրավահասկացողության մեկնակետի վրա, սակայն իրավունքի կենսագործման հասկացության գոյության տիրույթ են ճանաչում միայն դրական (պոզիտիվ) իրավունքի գործողության ոլորտը, այսինքն՝ սահմանափակում են այդ հասկացության ընդգրկման շրջանակները: Այս տեսաբանները ընդունում են իրավունքի օրենքում և իրավունքի այլ աղբյուրներում իրականացվելու, իդեալից իրականության վերածվելու հիմնախնդրի առկայությունը, ինչը, սակայն, արտացոլում են իրավասահմանում, իրավաստեղծագործություն հասկացությունների միջոցով և իրավունքի գործողության հայեցակարգի տիրույթներում, բայց ոչ իրավունքի կենսագործման (իրականացման) համակարգային հասկացության դիրքերից: Այս տարբերակի կարկառուն ներկայացուցիչը Վ. Ս. Ներսեսյանցն է:

3) Իրավունքի իրականացման տեսության տարբերակներ, որոնք կառուցված են իրավահասկացողության լայն վարկածների վրա և փորձում են իրավունքի կենսագործում (իրականացում) հասկացությունը իմաստավորել երկու կողմից՝ իրավունքի իրավաստեղծագործության կառուցակարգի միջոցով օրենքում և իրավունքի ձևական այլ աղբյուրներում կենսագործում, այնուհետև օբյեկտիվ կամ դրական իրավունքի կենսագործում կամ իրականացում հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքագծի միջոցով:

Գոյություն ունեն իրավունքի իրականացման ինքնատիպ կամ արտասովոր հայեցակարգեր, օրինակ՝ Ի. Տաբարինի հայեցակարգը:

**Առաջին գլխի 3-րդ ենթագլխում** «Իրավական կարգավորման համակարգում իրավունքի կենսագործման հիմնախնդրի փիլիսոփայական պատկերը և պայմանավորվածությունն իրավահասկացողությամբ» հեղինակը՝ իրավունքի կենսագործման հայեցակարգերի տիպաբանությունից ելնելով հետազոտությունը տարել է փիլիսոփայական, ինչպես նաև իրավահասկացողության դիրքերից:

Փիլիսոփայական մոտեցման դեպքում հասարակության իրավական համակարգի կայացումը սկզբնավորվում է իրավական իդեալից (ծրագրից, տեսությունից), իրավաստեղծագործության միջոցով անցնելով պոզիտիվացման-ձևականացման գործընթացը, վերածվում է նորմատիվ ձև ունեցող իրավական պահանջների (տեքստի) օբյեկտիվ իրավունքի: Որպես պիտոյ այդ պոզիտիվ իրավական ձևը դեռևս իրականություն չդարձած հնարավորություն է: Այն դեռևս չի կենսագործվել իրական կյանքում: Հետևաբար իրավական համակարգի շարժումը պետք է շարունակվի իրավական նորմատիվ ձևը (դրական օբյեկտիվ իրավունքը) կյանքում կենսագործելու և այդպիսով իդեալն իրականություն դարձնելու համար:

Այս ամբողջ շղթան ըստ էության իրավունքի կենսագործողությունն է, որի վերջնական նպատակը հասարակական կյանքում իրավական իդեալին համապատասխանող իրավակարգի հաստատումն է:

«Իրավունքի կենսագործում» գիտական հայեցակարգի ձևավորման և զարգացման ամփոփ քննարկումը, այդ հասկացության ըմբռնման արդի տեսական մոտեցումների վեր հանումը և դասակարգումը, ինչպես նաև «իրավունքի կենսագործում» հասկացության փիլիսոփայական-իրավական հարթության վրա վերլուծությունը հեղինակին հիմք են տվել եզրակացնելու, որ «իրավունքի կենսագործում» հասկացությունը և դրա վրա կառուցված տեսությունն արդի դարաշրջանում կարիք ունեն ավելի լայն դիրքերից վերաիմաստավորման անհրաժեշտություն: Դա պայմանավորված է նրանով, որ իրավունքի կենսագործումը որպես գործընթաց և արդյունք ընդգրկում է իրավունքի (որպես էության կամ իդեալի կամ սկզբունքի) ձևավորման (դրականացման) ու զարգացման գործընթացը, այնպես էլ իրավական ձևերում ամրագրված նորմերի կենսագործման, իրավակարգի վերածման գործընթացը: Այսինքն՝ իրավունքի կենսագործումը ենթադրում է ոչ միայն իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավունքի պաշտոնական ձևերում ամրագրված իրավական կարգադրագրերի բարեխիղճ, անշեղ և խստագույնս կենսագործումը (օգտագործման, պահպանման, կատարման, կիրառման միջոցով), այլև որպես օբյեկտիվ էություն, կա՛մ իդեա, կա՛մ սկզբունք հասկացված իրավունքի կենսագործում իրավական պաշտոնական ձևերում: Հետևաբար, իրավունքի կենսագործում հասկացության ընդգրկման սահմանները կախված են նրանից, թե ի՞նչ ենք հասկանում «իրավունք» ասելով: Այդպիսով, ինչպես իրավունքի փիլիսոփայության ու տեսության, իրավագիտության այլ ոլորտների հիմնահարցերի, այնպես էլ իրավունքի կենսագործման տեսության հիմնախնդիրների լուծման համար մեթոդաբանական-ուղենիշային տեսական ու գործնական նշանակություն ունի իրավահասկացողությունը: Իրավունքի կենսագործման տեսության տարբեր վարկածների հիմքում ևս ըստ էության ընկած է իրավահասկացողության որևէ տիպ, հետևաբար՝ հենց իրավահասկացողությունն է այն մեթոդաբանական հիմքը, որը կանխորոշում է իրավունքի կենսագործման տեսության տիպը:

Այսպիսով, իրավահասկացողության ձևական, պոզիտիվիստական, նորմատիվիստական, լեգիստական տիպերում իրավունքի կենսագործում հասկացությունն ունի նեղ, սահմանափակ իմաստ և նշանակում է պաշտոնապես գոյություն ունեցող, գործող դրական իրավունքի կենսագործում հասարակական իրավական հարաբերությունների սուբյեկտների վարքագծում՝ օգտագործման պահպանման, կատարման և կիրառման միջոցով: Մինչդեռ իրավահասկացողության իրավաբանական, բովանդակային (նաև խառը), իդեալիստական, մետաֆիզիկական տիպերում, բացի վերը նշված իմաստով իրավունքի կենսագործումից, առաջ է գալիս խնդիր, որը ևս ընդգրկված է «իրավունքի կենսագործում» հասկացության տիրույթում, այն է՝ իրավունքը որպես գաղափար, ինչ-որ սկզբունք, օբյեկտիվ էություն կենսագործել իրավական ձևերում (պաշտոնական) աղբյուրներում և հետո միայն իրավունքի սուբյեկտների իրական իրավական վարքագծում: Նորմատիվիզմին բնորոշ իրավական մտածողությունը նույնացնելով օրենքը (օրենսդրությունը) և իրավունքը, իրավունքի կենսագործումը հանգեցնում է միայն դրական ձև ունեցող իրավական դրույթների կենսագործմանը (իրականացմանը):

Իրավունքի և օրենքի տարբերակմամբ իրավամտածողությունը տարանջատելով իրավունքը և օրենքը, իրավական կարգավորման համակարգի առջև դնում է նոր խնդիր՝ պաշտոնականացնել, այսինքն՝ դրական օրենսդրության ձևով արտա-

հայտել միայն իրավունքը (դրա էությունը, սկզբունքը, գաղափարը) և դրա օբյեկտիվ պահանջները: Այդ խնդիրը նախորդում է դրական իրավունքի կենսագործման-իրականացմանը և կարևոր է նրանով, որ իրավունքի պոզիտիվացումը ինքնաբերաբար ենթադրվող գործընթաց չէ:

**Առաջին գլխի 4-րդ ենթագլխում** «Իրավունքի կենսագործում» հասկացության հիմնահարցերն իրավական կարգավորման կառուցակարգի փուլային համակարգի և պետության գործառույթների իրականացման իրավական ձևերի համատեքստում» հեղինակը իրավունքի կենսագործում հասկացությունը քննարկել իրավական կարգավորման կառուցակարգի համակարգում: «Իրավունքի կենսագործման» արդի տեսության և «իրավական կարգավորման կառուցակարգի» տեսության համեմատական վերլուծությունը հաստատում է, որ առաջինը կարծես թե ետ է մնացել, որովհետև մեծամասամբ իրավունքի տեսաբանները կենտրոնացել են դրական իրավունքի (օրենսդրության) կենսագործման հիմնահարցերի վրա: Մինչդեռ հիմա արդեն «իրավական կարգավորման կառուցակարգի» տեսության մեջ չկա որևէ հեղինակ, որն իրավական կարգավորման կառուցակարգը կպատկերացներ միայն որպես արդեն սահմանված օրենսդրության դրույթների կենսագործում հասարակական հարաբերություններում՝ սուբյեկտիվ իրավունքների օգտագործման կամ պարտականությունների կատարման միջոցով: Երկու տեսությունների միջև առկա այդ անհամամասնությունն անհրաժեշտ է հաղթահարել՝ մշակելով իրավական կարգավորման ողջ գործընթացն արտացոլող իրավունքի կենսագործման տեսության նոր հիմունքները՝ համապատասխանեցնելով այն «իրավական կարգավորման կառուցակարգի» տեսությանը, հատկապես, որ այս տեսությունն իրավունքի տեսության շրջանակներում ավելի լայն, վերացարկված մոտեցում է, քան «իրավունքի կենսագործման (իրականացման)» տեսությունը:

Եթե իրավական կարգավորման կառուցակարգի գործողությունն սկսվում է իրավունքի ձևավորումից (իրավակազմավորումից) և անցնում է իրավաստեղծագործության փուլին, իսկ այնուհետև պոզիտիվ իրավունքի կենսագործման ձևերին, ուրեմն «իրավունքի կենսագործում» հասկացությունը անպայմանորեն պետք է իրենում ներառի, իմաստավորի այդ գործընթացը: Իրավունքի կենսագործումը ևս անցնում է համապատասխան կառուցակարգով, որը սկսվում է իրավունքի ձևավորումից, անցնում իրավաստեղծագործության գործընթացով, այնուհետև փոխանցվում իրավական կարգավորման կառուցակարգի հաջորդ փուլերին: Իրավական կարգավորման և իրավունքի կենսագործման (իրականացման) կառուցակարգի բոլոր փուլերի գործողության իրական արդյունքն իրավակարգն է՝ արդեն կարգավորված հասարակական հարաբերությունները: Հետևաբար՝ «Իրավունքի կենսագործում» հասկացության քննարկումն իրավական կարգավորման կառուցակարգի փուլային համակարգում հնարավորություն է տալիս առաջ քաշելու և հիմնավորելու «իրավունքի կենսագործման կառուցակարգ» հասկացությունը:

Իրավունքի կենսագործման լայն հասկացության հիմնավորման լրացուցիչ միջոց կարել է համարել արդի պետության գործառույթների իրականացման իրավական ձևերի տեսության հիմնադրույթները: Հանրային իշխանության մարմինների իրավական գործունեությունը սկսվում է իրավունքը սահմանելուց, այնուհետև նրանք իրականացնում են իրավակիրառում, իրավապահպանություն, մեկնաբանողական և հսկիչ-վերահսկողական գործունեություն: Հանրային-պետական իշխանության իրականացման այս ձևերը, ցուցադրելով իշխանության և իրավունքի կապը, հուշում են, որ պետության իրավական գործունեությունը չի կարող սահմանափակվել միայն դրական ձև ունեցող նորմերի կենսագործմամբ, որ մինչ այդ պե-

տություները ստեղծում է իրավունքը, իրավունքի օբյեկտիվ պահանջները վերածում է դրական բնույթ ունեցող իրանորմերի, այսինքն՝ կենսագործում է իրավունքն իրավական ձևերում՝ սահմանադրության, օրենքների, ենթաօրենսդրական ակտերի մեջ:

Այսպիսով, իրավունքի կենսագործում հասկացությունը և՛ իրավական կարգավորման կառուցակարգում, և՛ պետական իշխանության իրականացման ձևերի համատեքստում վերլուծությունը հաստատում են լայն իմաստով «իրավունքի կենսագործում» հասկացության իրական հիմքերը:

**Երկրորդ գլխի՝ «Իրավունքի կենսագործման իրավական կառուցակարգը» 1-ին ենթագլխում** «Իրավունքի կենսագործումը որպես իրավունքի էության նյութականացում հասարակական հարաբերություններում» իրավական կեցությունը (իրականությունը) դիտարկում է հնարավորությունների համակցություն: Իրավունքը որպես հնարավորություն վերածվում է իրականության կենսագործման միջոցով: Իրավունքի նորմերն իրավաստեղծագործության միջոցով ձեռք են բերում իրավական ձև և այդ գործընթացն իրենից ներկայացնում է իրավունքի էության կենսագործում այնպիսի իրավական երևույթում, ինչպիսին է իրավունքի ձևը: Հետևաբար, «իրավունքի կենսագործում» հասկացության տակառաջին հերթին պետք է հասկանալ իրավաստեղծագործության միջոցով իրավական բնույթ ունեցող պաշտոնական ձևերի ընդունումը, դրանցում իրավունքի էության, սկզբունքի, իդեալների, պահանջների ամրագրումը: Այս գործընթացի ավարտից հետո իրավական կարգավորումը շարունակում է իր գործողությունը՝ խնդիր ունենալով հասարակական հարաբերություններում, դրանց մասնակիցների վարքագծում կենսագործել դրական ձև, ամրագրում ունեցող իրավական նորմերը: Իրավունքի կենսագործման այդ ողջ գործընթացն իր բոլոր ձևերով հեղինակն ամփոփում է «**իրավունքի կենսագործման իրավաբանական կառուցակարգ**» հասկացության մեջ: Այն նոր հասկացություն է իրավունքի տեսության մեջ, որն իրենում արտացոլում է կոնկրետ իրավական համակարգում իրավունքի կազմավորումը, ձևավորումը, այնուհետև իրավունքի սուբյեկտների վարքագծում դրա կենսագործվելը, իրականանալը: Իրավունքի կենսագործումը տարբեր երկրներում տեղի է ունենում տարբեր կերպ՝ պայմանավորված երկրի իրավական համակարգի առանձնահատկություններով: Բայց իրավունքի կենսագործման կառուցակարգը բոլոր իրավական համակարգերում ներառում է երկու հիմնական գործընթաց՝

1) իրավունքն պաշտոնական ձևերում ամրագրված իրավական նորմերի վերածվելու, իրավունքին պաշտոնական-նորմատիվ որոշակիություն հաղորդելու կառուցակարգ, որի ձևն իրավաստեղծագործությունն է,

2) դրական, սահմանված, պաշտոնական ուժ և հեղինակություն ձեռք բերած իրավունքի իրականացման կառուցակարգը, որին բնորոշ ձևերն են օգտագործումը, կատարումը, պահպանումը, կիրառումը:

**Երկրորդ գլխի 2-րդ ենթագլխում՝ «Իրավունքի ձևականացման (դրական իրավունքի վերածման) իրավական կառուցակարգը և դրա փուլերը»** քննարկվում է իրավունքի կենսագործման միասնական կառուցակարգի առաջին բաղադրամասը՝ որպես իրավունքի (օբյեկտիվ էության, սկզբունքի կամ իդեալի) պահանջները դրական իրավունքի վերածելու, դրանց պաշտոնական նորմատիվ ձև տալու կառուցակարգ, որի իրականացման ձևն իրավաստեղծագործությունն է:

Իրավունքի ձևականացման փուլերի առանձնացման չափանիշը կոնկրետ իրավական համակարգում իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգային ստորակարգությունն է: ՀՀ իրավական համակարգի օրինակով՝ հիմք ընդունելով մասնավոր իրավունքի ոլորտում իրավունքի ներպետական աղբյուրների ըստ

իրավաբանական ուժի ստորակարգությունը (ՀՀ Սահմանադրությունը, սահմանադրական դատարանի որոշումները, օրենսգրքերը և մասնավոր իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքները, ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը), իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացում հեղինակն առանձնացնում է երեք փուլեր՝ սահմանադրումը, օրինաստեղծագործությունը, ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը: Դրանցից ելակետայինն է համարվում սահմանադրումը և նրա արդյունքը՝ Սահմանադրությունը՝ որպես իրավունքի էության (գաղափարի, սկզբունքի) արտահայտման առաջնակարգ ձև: Մնացած երկուսը ստորակարգված են սահմանադրմանը, իսկ դրանց արդյունքները՝ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, Սահմանադրության դրույթների կոնկրետացման ձևով իրավունքի կենսագործումն են:

ՀՀ իրավական համակարգի օրինակով, իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացն անցնում է հետևյալ փուլերը:

**Առաջին փուլում** տեղի է ունենում բնական կամ այլ կերպ հասկացված իրավունքի ամրագրում Սահմանադրության մեջ՝ իրավունքին սահմանադրական նորմատիվ ձև և ուժ տալու միջոցով: Իրավաբանական իրավահասկացողության (բնական-իրավական և ազատական-իրավաբանական) տեսանկյունից իրավունքի կենսագործման կառուցակարգի առաջին փուլն իրավունքի սահմանադրականացումն է, իսկ դրա արտահայտությունը՝ իրավական ձևը, արդյունքը Սահմանադրությունն է՝ որպես հիմնական օրենք: Ընթացիկ, ոչ սահմանադրական օրինաստեղծագործությունն իրավունքի կենսագործման (ձևականացման) այն կառուցակարգն է, որը հաջորդում է սահմանադրմանը և որը որպես **երկրորդ փուլ** կոնկրետացնում է Սահմանադրության մեջ ամրագրված իրավունքը:

Իրավունքը ժողովրդի անմիջական իրավաստեղծագործության միջոցով կենսագործվում է Սահմանադրության մեջ, իսկ այնուհետև օրենքում: Իրավունքի աղբյուրների ստորադասության մեջ Սահմանադրությունից հետո հաջորդը **սահմանադրական դատարանի գործով ըստ էության կայացված որոշումներն են**: Դրանք Սահմանադրությունը կոնկրետացնող և նորմատիվ նշանակություն ունեցող ակտեր են, որոնք ունեն ավել բարձր իրավաբանական ուժ իրավունքի այլ աղբյուրների նկատմամբ, ինչը բխում է Սահմանադրության բարձրագույն ուժից: Իրավունքի ձևերի ստորակարգության հաշվառմամբ իրավունքի կենսագործման, դրան նորմատիվ ձև տալու **երրորդ փուլը** ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունն է, որը որպես գործընթաց կոնկրետացման ձևով կենսագործում է Սահմանադրության մեջ և օրենքներում ամրագրված իրավունքը: Իրավունքի կենսագործման և ձևականացման այս փուլում ընթացք են ստանում օրենքի կենսագործման տարբեր կառուցակարգերը, որոնց միջոցով տեղի է ունենում օրենքի իրավական պահանջների և դրույթների կոնկրետացում: Այդ կառուցակարգի ձևերն են ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը, օրենքների դրույթների մեկնաբանումը և այլն:

**Երկրորդ գլխի 3-րդ ենթագլխում քննարկվել** են անհատական իրավական կարգավորման, իրավաբանական անալոգիայի և դատական նախադեպի հիմնախնդիրներն իրավունքի կենսագործման կառուցակարգում: Իրավունքի կենսագործման կառուցակարգի դիտարկումը որպես սահմանադրման, օրենսդրման և ենթաօրենսդրական իրավաստեղծագործության ամբողջություն, լրիվ չի արտացոլում իրականությունը, որովհետև, իրավական կարգավորման որոշ ոլորտներում իրավունքի ձևական աղբյուրներին գումարվում են իրավական կարգավորման միջոցները՝ լրացնելով դրական իրավական ձևերը: Մասնավոր իրավունքի ոլորտում կարգավորման աղբյուրների (ձևերի) և միջոցների ստորակարգությունն իմաստա-

վորելով՝ իրավունքի կենսագործման կառուցակարգում առաջանում է իրավական սովորույթների, անհատական իրավական կարգավորման, անալոգիայի հիմնահարցն այդ կառուցակարգում:

Իրավական կարգավորման մի շարք ոլորտներում իրավունքի ձևականացման իրավական կառուցակարգը սահմանափակվում է սահմանադրմամբ, օրենսդրմամբ և ենթաօրենսդրական իրավաստեղծ գործունեության ձևով: Ընդ որում կան իրավունքի ճյուղեր, որոնցում իրավունքի ձևականացման կառուցակարգը ենթադրում է միայն սահմանադրումը և օրինաստեղծագործությունը: Քաղաքացիական իրավունքի ոլորտում իրավունքի որպես էության կենսագործման կառուցակարգը ենթադրում է իրավունքի գրեթե բոլոր նորմատիվ ձևերը և դրան ավելացրած նաև իրավական կարգավորման միջոցները, ինչի հետևանքով իրավունքի կենսագործման կառուցակարգն այստեղ էականորեն տարբերվում է քրեական իրավունքի ոլորտում իրավունքի կենսագործման կառուցակարգից: Քաղաքացիական իրավունքի ոլորտում իրավունքի էության կենսագործումն իրավունքի ձևականացման միջոցով տեղի է ունենում սահմանադրմամբ, օրենսդրմամբ, ենթաօրենսդրական իրավաստեղծագործությամբ: Դրանց արդյունքում ստեղծված և գործող օրենսդրության մեջ առկա իրավական կարգավորման բացը կարող է լրացվել, կոնկրետացվել իրավական սովորույթի կիրառման միջոցով:

Իրավական սովորույթի՝ որպես իրավունքի էության արտահայտման միջոցի, առանձնահատկությունն այն է, որ այս դեպքում իրավական վարքագծի ձևականացումը պետությունը չի կատարում: Պետությունն ընդամենը թույլատրում է դրա կիրառումն այն դեպքերում, երբ ո՛չ օրենքում, ո՛չ էլ կողմերի կնքած պայմանագրում չկան կողմերի հարաբերությունների կարգավորման իրավական մոդելները: Իրավակիրառող մարմինը չի կարող կիրառել օրենսդրության պարտադիր դրույթներին կամ պայմանագրերին հակասող սովորույթները: Դրանով իսկ իրավական սովորույթները համարվում են օրենսդրության և պայմանագրային կարգավորումների բացերի լրացման ձև, ունեն ենթաօրենսդրական ստորակարգություն և լրացուցիչ (ֆակուլտատիվ) նշանակություն, հետևաբար, սովորույթների կիրառման դեպքերն իրենցից ներկայացնում են օրենսդրության կոնկրետացման ձև:

Անհատական իրավական կարգավորում հասկացությունն ունի գոյության իրավունք իրավունքի կենսագործման կառուցակարգի առաջին բաղադրատարրում՝ իրավունքի ձևականացման ենթակառուցակարգում, որովհետև հասարակական հարաբերությունների մասնակից իրավասուբյեկտ անձինք անմիջականորեն իրենք որոշում են իրենց իրավունքը, այսինքն՝ կոնկրետացնում են իրավունքի էությունն իրենց անհատական դեպքի համար՝ ամրագրելով դա քաղաքացիական պայմանագրում: Հետևաբար, ի տարբերություն հանրային իրավունքի ոլորտի, մասնավոր (քաղաքացիական) իրավունքի ոլորտում իրավունքի դրականացման, ձևականացման յուրօրինակ ձև է դառնում անհատական իրավական կարգավորումը: Անհատական իրավական կարգավորումը՝ որպես իրավունքի էության կենսագործման ձև, միջանկյալ դիրք է գրավում իրավունքի նորմատիվ կարգավորման ձևականացված ստորակարգության այնպիսի աստիճանների միջև, ինչպիսիք են իրավունքի իմպերատիվ և դիսպոզիտիվ նորմերը: Անհատական կարգավորումը նորմատիվ կարգավորումից տարբերվում է այնքանով, որքանով որ այն գործում է միայն տվյալ գործարքի կամ պայմանագրի մասնակից կողմերի համար, չունի նորմատիվ նշանակություն: Հետևաբար, անհատական իրավական կարգավորումը գործում է դրական իրավունքի (օրենսդրության) իրականացման փուլում, սակայն իրենից ներկայացնում է իրավունքի ձևականացման կառուցակարգի դրսևորում: Այդ ձևով կոնկրետացված իրավունքի կանոնը չի կարող հակասել օ-

րենսդրության իմպերատիվ նորմերին:

Հանրային (պետական) մարմինների կողմից անհատական իրավական կարգավորումը մայրցամաքային իրավունքի համակարգում հանգում է իրավաբանական անալոգիայի և դատական նախադեպի հիմնահարցին: Այս համատեքստում որպեսզի կարողանա իմաստավորել անալոգիայի տեղն իրավունքի կենսագործման կառուցակարգում, հեղինակը փորձել է պարզել, թե ինչ է բաց կոչվածն իրավական կարգավորման ոլորտում: Արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ **իրավաբանական անալոգիան իրավունքի էության կոնկրետացման գործընթացի հաջորդ աստիճանն է, իրավական կարգավորման այն ոլորտներում, որտեղ թույլատրվում է անալոգիան:**

Այնուհետև հետազոտվել է իրավունքի կենսագործման կառուցակարգում դատական նախադեպի տեղը՝ ուղենիշային հիմք ընդունելով դատական նախադեպերի տեսակները՝ դասական-իրավաստեղծ և մեկնաբանողական: Իրավաստեղծ նախադեպերը տեղավորվում են իրավունքի կենսագործման առաջին՝ իրավունքի ձևականացման, իրավաստեղծագործության կառուցակարգում: Հայաստանի իրավական համակարգում դասական նախադեպն առկա է միայն իրավունքի անալոգիայի դեպքում: Դատարանն իրավաստեղծ նախադեպի միջոցով ամրագրում է իրավունքի՝ իր կողմից հասկացված էությունը: Այս դեպքում իրավունքի էության կենսագործումը նախադեպային ձևում և դատական իրավակիրառումը սերտաձած են, իրավակիրառման ընթացքում ստեղծված անհատական կանոնը ձեռք է բերում նորմատիվ նշանակություն հետագա դեպքերի համար: Մեկնաբանողական նախադեպերն իրավունքի ածանցյալ աղբյուրներ են, որովհետև իրավունքի կենսագործման-կիրառման գործընթացում իրավագոր սուբյեկտն օրենքի հիման վրա կոնկրետացնելով օրենքի դրույթները՝ միասնականացում է դրա կենսագործման կարգը: Մեկնաբանողական նախադեպը չի ստեղծում իրավունք (իրավունքի նորմ), այլ մեկնաբանում է օրենքով ամրագրված իրավունքի ընդհանուր, վերացարկված կանոնը՝ անհատական որոշակի անձանց և դեպքերի վերաբերյալ: Այս տեսակի նախադեպն համարվում է օրենքը կոնկրետացնող իրավակիրառում, որն ունի ենթաօրենսդրական նշանակություն:

**Երրորդ գլխի** «Իրավունքի իրականացման որպես իրավունքի կենսագործման ենթահամակարգի հիմնախնդիրները» **1-ին ենթագլխում** նախանշվել են «իրավունքի իրականացման» որպես իրավունքի կենսագործման ենթահամակարգի տեսական հետազոտման ուղղությունները: Մասնավորապես հեղինակի կատարած տեսական հետազոտության արդյունքում իրավաբանական նորմատիվականության դիրքերի վրա կառուցված դրական իրավունքի կենսագործման հայեցակարգը վերաիմաստավորվել է իրավունքի և օրենքի տարբերակման հայեցակարգերի դիրքերից, դրական իրավունքի կենսագործումը դիտարկելով որպես իրավունքի կենսագործման հասարակական-իրավական գործընթացի շարունակություն՝ երկրորդ փուլ, ձև, ենթակառուցակարգ: Այս հանգամանքից ելնելով հեղինակը երրորդ գլխում քննարկման առարկա է դարձնել միայն դրական իրավունքի կենսագործման կառուցակարգի այնպիսի հիմնահարց, ինչպիսին է դրա հասկացությունը, ինչպես նաև կատարել մի շարք բանավեճային հիմնախնդիրների վերլուծություն, մասնավորապես՝ դրական իրավունքի կենսագործումը տեսակների և ձևերի դասակարգումը, իրավունքի կիրառման որպես իրավունքի կենսագործման պետաիշխանական գործունեության տեսակների հիմնահարցը: Սակայն մինչ այդ խնդիրների հետազոտմանն անցնելը հեղինակն առաջարկել է իրավունքի իրականացման իրական գործընթացը ճշգրիտ արտացոլող եզրույթաբանական պաշարը: Եթե խորհրդային իրավագիտությունը և ներկայիս իրավունքի նորմատիվային հայե-

ցակարգերը օգտագործում են «իրավունքի ռեալիզացիա» (իրականացում) ձևակերպումը և դրա ձևերը մատնանշող կատարում, պահպանում, օգտագործում, կիրառում հասկացությունները, ապա հեղինակը դրական իրավունքի իրականացման կառուցակարգը բաժանել է երկու կառուցակարգերի՝ ա) **իրավունքի իրագործման (իրավաիրագործման)** կառուցակարգ, որը ներառում է իրավունքի իրականացման երեք անմիջական ձևերը՝ **օգտագործումը, կատարումը, պահպանումը**, բ) հանրային իշխանական մարմինների կողմից **իրավունքի կիրառման (իրավակիրառման)** կառուցակարգ: Իրավակիրառման տեսակներն են՝ **գործադիր իրավակիրառումը** (իրավագործադրումը), **իրավապահպանությունը** (ներառյալ դատական), **վերահսկողական-հսկողական իրավակիրառումը, մեկնաբանողական իրավակիրառումը**:

**Երրորդ գլխի 2-րդ պարագրաֆում**՝ «Իրավունքի իրականացման հասկացությունն իրավունքի կենսագործման կառուցակարգի հայեցակարգային դիրքերից» հեղինակը կատարել է տեսական գրականության մեջ առկա իրավունքի իրականացման հասկացության տարբեր վարկածների և հատկանիշների վերլուծություն, հիմնավորելով ընդունելի հատկանիշները: Այս մեթոդաբանական մոտեցման հիման վրա հեղինակը առաջ է քաշել իրավունքի իրականացման հետևյալ հատկանիշները՝ ա) իրավունքի իրականացմանը մասնակցում են սուբյեկտիվ իրավունքներով օժտված և իրավական պարտականություններ կրող սուբյեկտները, բ) դրական իրավունքի իրականացման օբյեկտ են համարվում իրավունքը և դրա էությունն արտահայտող իրավական սկզբունքները, իրավական նորմերի ողջ զանգվածը, գ) իրավունքն իրականացվում է իրավունքի սուբյեկտների փաստական իրավաչափ վարքագծում կենսագործվելով, դառնալով իրականություն, դ) իրավունքի իրականացման կառուցակարգը ենթադրում է իրավախախտումների դեպքում իրավախախտների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառում:

Հիմք ընդունելով իրավունքի իրականացման վերը քննարկված, հիմնավորված և նոր առաջ քաշված հատկանիշները, հեղինակը կառուցել է իրավունքի իրականացման հասկացության հետևյալ բնորոշումը. **դրական իրավունքի իրականացումը իրավունքի, դրա էությունն արտահայտող իրավական սկզբունքների, իրավական նորմերի համակցության կենսագործումն է, որը տեղի է ունենում իրավունքի սուբյեկտների փաստական իրավաչափ վարքագծի միջոցով, ինչպես նաև իրավախախտողների նկատմամբ իրավական պատասխանատվության միջոցների կիրառմամբ**:

Իրավունքի և օրենքի տարբերակմամբ կառուցված իրավագիտության դիրքերից իրավունքի իրականացման կառուցակարգի օբյեկտն են իրավունքը և դրա էությունն արտահայտող իրավական սկզբունքներն ու իրավական նորմերը, որոնք իրականացվում են իրավունքներով օժտված և իրավական պարտականություններ կրող իրավունքի սուբյեկտների փաստական իրավաչափ վարքագծում կենսագործմամբ, իսկ իրավախախտումների դեպքում իրավախախտների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառմամբ: Իրավունքի իրականացումը որպես գործընթաց ենթադրում է ոչ միայն իրավական նորմերի կենսագործում փաստական իրավաչափ վարքագծում, այլ նաև համապատասխան ինստիտուտների կիրառմամբ իրավունքի էության, սկզբունքի գաղափարի (իդեայի) անմիջական, ուղղակի կենսագործում նորմատիվ կարգավորման բացակայության դեպքում կամ իրավունքից շեղված նորմերի վերացում, փոփոխում, լրացում իրավունքի էությունն իր դրսևորման մեջ դարձնելով ամբողջական, համապատասխանող: Իրավունքի իրականացման արդյունքը ոչ միայն օրենսդրի կողմից նորմերում



դրված մասնավոր նպատակի կենսագործումն է, այլ նաև իրավունքի որպես էության և սկզբունքի կենսագործումը: Իրականացման գործընթացում գլխավորն իրավունքի կենսագործումն է (օբյեկտիվ կողմ), սակայն սուբյեկտիվ կողմի գործունեությունը կարող են իրավունքի իրականացումը սովորական հունից տեղափոխել իրավական կարգավորման նորմատիվային հիմքի վերանայմանը՝ հասնելով իրավունքի էության առավել լրիվ և համապատասխանող դրսևորմանը՝ նորմատիվ-դրական նոր կարգավորման պաշտոնական ընդունման միջոցով:

**Երրորդ գլխի 3-րդ ենթագլխում** «Իրավունքի իրականացման տեսակների և ձևերի հիմնախնդիրները» քննարկելով տեսական գրականության մեջ տարակարծիք մոտեցումները դրական իրավունքի նորմերի իրականացումը տեսակների ու ձևերի դասակարգման հարցում, վեր է հանել իրավունքի իրականացման կառուցակարգի որպես իրավունքի իրականացման ընթացակարգի և արդյունքի բոլոր հնարավոր ձևերը, դրանց վերաբերյալ տարակարծիք տեսակետները, փորձելով համակարգման միջոցով ամբողջական տեսքի բերել այդ հիմնահարցն իրավունքի կենսագործման կառուցակարգի համատեքստում:

Հետազոտության ստացված արդյունքները տեղավորելով իրավունքի կենսագործման կառուցակարգում՝ ատենախոսը հանգում է հետևյալ եզրակացությունների: Իրավունքի կենսագործման կառուցակարգի երկրորդ ենթակառուցակարգն՝ իրավունքի իրականացումը, ենթադրում է իրավունքի իրականացման չորս ձև՝ իրավունքի օգտագործում, իրավունքի պահպանում, իրավունքի կատարում և իրավունքի կիրառում: Այդ չորս ձևերից առաջին երեքն իրենց բնույթով էականորեն տարբերվում են չորրորդից: Առաջին հերթին դրանք իրավունքի կենսագործման շատ պարզ ընթացակարգեր են, ի տարբերություն իրավունքի կիրառման, որն իրենից ներկայացնում է հանրային (պետական) իշխանական մարմնի բավականին բարդ իրավակիրառական գործողությունների շղթա: Մյուս տարբերությունն այն է, որ իրավունքի իրականացման ձևն իրավունքի կիրառման միջոցով իրավունքի միջնորդավորված կենսագործում է. որպես միջնորդ հանդես է գալիս իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը: Այնինչ մյուս երեք ձևերն անմիջական են, ուղղակի, այսինքն՝ հասարակական հարաբերությունների մասնակիցները, ովքեր ունեն իրավունքի սուբյեկտի կարգավիճակ, իրենք իրենց վարքագծով անմիջապես իրականացնում են իրավունքի նորմերով սահմանված պահանջները, օգտվում իրենց տրված իրավական հնարավորություններից: Այսպիսով, դրական իրավունքի իրականացման կառուցակարգը միասնական և միօրինակ գործընթաց է: Այդ հատկությունից ելնելով այն անհրաժեշտ է տրոհել երկու կառուցակարգի՝

ա) իրավունքի իրագործման (իրավաիրագործման) կառուցակարգ, որը ներառում է իրավունքի իրականացման երեք անմիջական ձևերը՝ օգտագործումը, կատարումը, պահպանումը,

բ) իրավունքի կիրառման (իրավակիրառման) կառուցակարգ, որը հանրային (պետական) գործունեության տեսակ է, իշխանական լիազորություններով օժտված մարմնի միջոցով իրավունքի իրականացում:

Բացի իրականացման անմիջականության տեսանկյունից տարբերության, իրավաիրագործման կառուցակարգի և իրավակիրառման կառուցակարգի միջև առկա է ևս մեկ էական տարբերություն, որը հանգում է դրանց իրավական կարգավորման և իրականացման սկզբունքների տարբերությանը: Եթե իրավաիրագործման ընդհանուր կարգավորիչ սկզբունքն է՝ «թույլատրվում է այն ամենը, ինչ արգելված չէ օրենքով» ապա իրավակիրառման որպես հանրային (պետական) իշխանական գործունեության, սկզբունքը համարվում է հակառակը՝ «պետական մարմինները և պաշտոնատար անձինք կարող են անել այն ամենը, ինչը թույլատրված է օրենքով»:

քով»։ Արդի պայմաններում այդ սկզբունքներն ունեն սահմանադրական ամրագրում, ինչը ևս հաստատում է իրավաիրազորման և իրավակիրառման տարանջատման անհրաժեշտությունը։ Համաձայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով։ Դրան հակառակ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները։ ՀՀ Սահմանադրության 42 հոդվածի 2-րդ մասն ունի խորը հակապոզիտիվիստական, հականորմատիվիստական, հակալեգիտական բովանդակություն։ Դրա առաջին դրույթի բովանդակությունից բխում են հետևյալ իրավական բանաձևերը. 1) յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով, 2) արգելվում է կատարել այն, ինչը խախտում է այլ անձանց իրավունքները և ազատությունները։

Այդ սկզբունքները հաստատում են այն հանգամանքը, որ նույնիսկ արդեն պաշտոնական ձև ստացած իրավունքի իրականացման ժամանակ հրատապ խնդիր է իրավունքի որպես ազատության չափի կենսագործումը։

Իրավակիրառման որպես հանրային (պետական) իշխանական գործունեության հիմնարար սկզբունքն է իրավունքի գերակայությունը, դրանով պայմանավորված պետական իշխանության սահմանափակվածությունն իրավունքով։ Մյուս կողմից իրավակիրառման կառուցակարգում առկա են ինստիտուտներ, որոնք ուղղակիորեն, անմիջականորեն նպատակամղված են իրավունքի էության կենսագործմանն այն դեպքերում, երբ նորմատիվ կարգավորման մոդելի իրավաչափությունը կասկածելի է կամ էլ, երբ իրավակիրառողն առանց կարգավորման մոդելի (նորմի) անմիջապես, ուղղակի կիրառում է իրավունքն՝ անհատական կարգավորում տալով դեպքին իրավաբանական անալոգիայի միջոցով կամ դատական նախադեպային իրավաստեղծագործության միջոցով։ Իրավունքի որպես էության կամ սկզբունքի կամ գաղափարի (իդեայի) կենսագործման հարցը հրատապ է նաև իրավագործադրման կառուցակարգի համար, որի սկզբունքը հենց իրավունքից բխող ազատության ապահովությունն է, իրավունքի իսկական էության կենսագոյությունը համապատասխան հարաբերություններում։ Դրանով պայմանավորված իրավագործադրման համար կարևոր նշանակություն ունի այն սկզբունքը, որ «իրավունքից է բխում կանոնը, այլ ոչ թե կանոնից իրավունքը»։

Դրական իրավունքի իրականացման կառուցակարգը միասեռ գործընթաց չէ։ Այդ տրոհվում է երկու կառուցակարգի՝ ա) իրավունքի իրագործման (իրավաիրագործման) կառուցակարգ, որը ներառում է իրավունքի իրականացման երեք անմիջական ձևերը՝ օգտագործումը, կատարումը, պահպանումը, բ) իրավունքի կիրառման (իրավակիրառման) կառուցակարգ, որն ի տարբերություն նախորդի հանրային (պետական) գործունեության տեսակ է, իշխանական լիազորություններով օժտված մարմնի միջոցով իրավունքի իրականացում։ Այս երկու կառուցակարգի միջև առկա է ևս մեկ էական տարբերություն։ Եթե իրավաիրագործման ընդհանուր կարգավորիչ սկզբունքն է՝ «թույլատրվում է այն ամենը, ինչ արգելված չէ օրենքով», ապա իրավակիրառման որպես հանրային (պետական) իշխանական գործունեության, սկզբունքը համարվում է հակառակը՝ «պետական մարմինները և պաշտոնատար անձինք կարող են անել այն ամենը, ինչը թույլատրված է օրենքով»։

Իրավակիրառման որպես հանրային (պետական) իշխանական գործունեության համար հիմնարար սկզբունք է իրավունքի գերակայությունը։ Իրավակիրառ-

ման կառուցակարգում առկա են ինստիտուտներ, որոնք ուղղակիորեն, անմիջականորեն նպատակամղված են իրավունքի էության կենսագործմանն այն դեպքերում, երբ նորմատիվ կարգավորման մոդելի իրավաչափությունը կասկածելի է կամ էլ, երբ իրավակիրառողն առանց կարգավորման մոդելի (նորմի) անմիջապես, ուղղակի կիրառում է իրավունքն՝ անհատական կարգավորում տալով դեպքին իրավաբանական անալոգիայի միջոցով կամ դատական նախադեպային իրավաստեղծագործության միջոցով:

**Երրորդ գլխի 4-րդ ենթագլխում** «Իրավունքի կիրառման որպես իրավունքի իրականացման հատուկ ձևի հասկացության տեսագործնական հիմնախնդիրները» հեղինակը քննարկման առարկա է դարձրել իրավունքի կիրառման տեսության ոչ թե բոլոր հիմնահարցերը, քանզի դրանք բավականին մանրամասն մշակված են տեսության մեջ, այլ հետազոտական խնդիր է դարձրել մեկ հիմնական ուղղություն՝ կատարել իրավունքի կիրառման հատկանիշների, անհրաժեշտության և դրանց հետ կապված նաև իրավունքի կիրառման գործառույթների հիմնահարցերի տեսական վերլուծություն իրավունքի կենսագործման հայեցակարգի տեսանկյունից:

Իրավունքի կիրառման հատկանիշների, անհրաժեշտության, գործառույթների հիմնահարցերի տեսական վերլուծությունն իրավունքի կենսագործման հայեցակարգի և իրավունքի գերակայության սկզբունքի դիրքերից հիմք են տվել հեղինակին հանգելու հետևյալ եզրակացությանը. իրավունքի իրականացման կառուցակարգում (իր չորս ձևերով) և հատկապես իրավակիրառման դեպքում կարևոր է իրավունքի էության կենսագործման խնդիրը: Հենց իրավակիրառման ընթացքում են հայտնաբերվում իրավական կարգավորման բացերը, կայացվում են նախադեպերը, պարզվում է իրավունքի պաշտոնական ձևերի ոչ իրավականությունը, այսինքն՝ շեղումներն իրավունքից, մարդու իրավունքներից, Սահմանադրությունից: Հետևաբար, իրավունքի կիրառման անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել նորմատիվ (օրենսդրական) կարգավորման բացով, արդեն առկա դրական իրավական նորմերի հակաիրավականությամբ: Իրավակիրառման ընթացքում անցկացվում է իրավական կարգավորման նորմատիվ մոդելի փորձաքննություն, որը ենթադրում է ոչ միայն պոզիտիվ իրավական նորմի ընտրություն և իրավական որակում, այլ նաև նորմի արժեքաբանական, գնահատողական փորձաքննություն իրավականության չափանիշով, իրավունքի էությանը, սկզբունքին, գաղափարին համապատասխանության տեսանկյունից: Այդ արժեքաբանական գործընթացը ենթադրում է իրավունքի ձևում ամրագրված նորմի և իրավունքի էության, սկզբունքի համադրում և համեմատություն: Հետևաբար, **իրավունքի կիրառման հատկանիշ է այն, որ դրա ընթացքում շարունակվում է նորմատիվ կարգավորման գործընթացը, որը սկսվել էր նախորդող՝ իրավաստեղծագործության կառուցակարգում, սակայն կարիք ունի լրացման (անալոգիայի միջոցով, նախադեպի կայացման միջոցով) կամ էլ կատարելագործման՝ դատական բողոքարկման միջոցով:** Իրավունքի կիրառման գործընթացը, դրա վերաբերյալ տեղեկույթն առաջ է բերում նոր իրադրություններ, որոնց համապատասխան տեղի է ունենում նորմատիվ մոդելի ճշգրտում, կատարելագործում, լրացում: Ուստի իրավակիրառումն իրավապահովող նշանակություն ունի ոչ միայն իրավունքի իրականացման անմիջական ձևերի համար, այլ նաև իրավաստեղծագործության ձևով իրավունքի կենսագործման կառուցակարգի համար: Իրավունքի կիրառման օբյեկտ է ոչ միայն նորմը, այլ նաև իրավունքը, իսկ իրավակիրառման գործառույթներից է նաև իրավունքի նորմերն իրավականության դիրքերից արժեքաբանական վերլուծության ենթարկելը: Հետևաբար, իրավունքի կիրառման սկզբունք է ոչ թե ձևական օրինականությունը, այլև իրավական օրինականությունը:

**Երրորդ գլխի 5-րդ ենթագլխում** «Իրավունքի կիրառումը որպես իրավունքի իրականացման հատուկ ընթացակարգի տեսակների և ձևերի դասակարգման հիմնախնդիրները» հեղինակը նկատում է, որ իրավունքի կիրառման տեսակների և ձևերի վերաբերյալ գաղափարներն առաջ են քաշվել դեռևս խորհրդային իրավունքի տեսության մեջ: Սակայն իրավակիրառման տեսակների վերաբերյալ խորհրդային իրավունքի տեսության մշակումներն այսօրվա իրողությունների հետ համեմատած հնացած են, քանի որ դրանք կառուցված են խորհրդային պետաիշխանական համակարգի վրա, որը չէր ընդունում իշխանությունների բաժանման տեսությունը: Նշանակում է՝ հիմնախնդիրը կարիք ունի լրացուցիչ հետազոտության պետաիրավական արդի իրողությունների, պետության ու իրավունքի տեսության արդի դիրքերից: Այդ խնդրի լուծման համար հեղինակը նախ փորձել է վեր հանել իրավունքի արդի տեսության մեջ առկա մոտեցումներն իրավակիրառ գործունեության տեսակների և ձևերի վերաբերյալ, այնուհետև համադրել դրանք պետականագիտության վերջին նվաճումների հետ և կառուցել սեփական տեսական եզրակացությունները: Ատենախոսի կարծիքով, իրավակիրառ գործունեությունը տեսակների բաժանման հարցում անհրաժեշտ է հաշվի առնել պետության գործառնության իրականացման իրավական ձևերի վերաբերյալ տեսական պատկերացումները, որոնք ավելի հարուստ են, քան իրավակիրառումը ձևերի ու տեսակների դասակարգելու մոտեցումները: Մյուս կողմից դասակարգման համար անհրաժեշտ է հիմք դարձնել իրավակիրառման առջև կանգնած խնդիրները, որոնք բխում են իրավական կարգավորման կառուցակարգի ամեն մի փուլի առջև դրված խնդիրներից:

Իրավակիրառական գործունեությունը հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունն է՝ ուղղված անհատական իրավաբանական գործերի քննությանը և լուծմանը, նորմատիվ ակտերի դրույթների (օրենքների) կենսագործմանը, որն ավարտվում է անհատական իրավական ակտի ընդունմամբ: Իրավակիրառման տեսակներն են՝ գործադիր իրավակիրառումը (իրավագործադրումը), իրավապահպանությունը (ներառյալ՝ դատական), վերահսկողական-հսկողական իրավակիրառական գործունեությունը, մեկնաբանողական իրավակիրառական գործունեությունը:

**Իրավագործադրումը**՝ որպես իրավունքի կիրառման ձև, իրավապահպանական գործունեությունից (ներառյալ արդարադատությունից) տարբերվում է նրանով, որ կապված չէ ոչ իրավական վեճի հետ, ոչ էլ իրավախախտման հետ: Այդպիսի իրավակիրառական գործունեությունն ունի իրավապահովող նշանակություն: Իրավակիրառման **իրավապահպան ձևի** խնդիրն է պահպանել իրավունքի նորմերը ցանկացած խախտումից, կիրառել պետական հարկադրանքն իրավախախտների նկատմամբ, ապահովել նշանակված պատասխանատվության միջոցների կատարումը:

Հեղինակի կարծիքով՝ իրավակիրառման տեսակներից մեկն էլ **մեկնաբանողական իրավական գործունեությունն է**: Խոսքը գնում է պաշտոնական մեկնաբանման նորմատիվ տեսակի մասին: Պաշտոնական մեկնաբանումն իրականացնում են օրենքով սահմանված պետական մարմինները, համապատասխան շահագրգիռ սուբյեկտների դիմումի հիման վրա՝ կոնկրետացնելով սահմանադրության կամ այլ ակտերի դրույթները՝ կատարելով՝ պարզաբանում-մեկնաբանում՝ առանց իրավագործադրման:

Պաշտոնական մեկնաբանման տեսակներից մեկը լեզալ մեկնաբանումն է: «Իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքը սահմանում է իրավական ակտերի դրույթների պարզաբանման ընթացակարգը (հոդվ. 87), որն ըստ էության իրավակիրա-

ռում է: Լեգալ նորմատիվ մեկնաբանման տարատեսակ է սահմանադրական նորմատիվ մեկնաբանումը՝ որպես սահմանադրության իմաստի միատեսակ ըմբռնման և կիրառման նախադրյալ: Այս իրավակարգավորումները հիմք են տալիս պնդելու, որ օրենքով սահմանված պաշտոնական մեկնաբանման այդ ընթացակարգերն իրենց իրավական բնույթով իրավակիրառ գործունեություն են, որովհետև համապատասխանում են դրա հատկանիշներին և ավարտվում են անհատական իրավական ակտերի ընդունմամբ: Պաշտոնական իրավական մեկնաբանողական գործունեության որպես իրավակիրառման տեսակի խնդիրն իրավական կարգավորման գործընթացում իրավաապահովող, կոնկրետացնող նշանակությունն է:

Հսկողության և վերահսկողության, որպես հանրային իրավական մարմինների գործունեության, այսինքն՝ իրավակիրառման խնդիրն է իրավունքի իրականացման այլ ձևերի գնահատումը իրավական օրինականության դիրքերից: Վերահսկողությունը և հսկողությունը, որպես իրավակիրառման տեսակ, զուգորդում կամ հաջորդում են դրանց, կոչված են պարզել հսկվող-վերահսկվող օբյեկտում իրավունքի և դրա նորմերի իրականացման փաստական կացությունն իրավական օրինականության դիրքերից: Այդպիսի գործունեությունն իր հատկանիշներով համապատասխանում է իրավակիրառմանը, միակ տարբերությամբ, որ այս դեպքում կատարվում է արդեն տեղի ունեցած իրավաիրականացման և իրավակիրառման ստուգում:

Ատենախոսական աշխատանքի հետազոտման առարկայի համակարգված տեսաիրավական հետազոտության հիման վրա կառուցվել են հետևյալ **հիմնական եզրակացությունները**.

1. Իրավահասկացողության ձևական, նորմատիվիստական, լեգիստական տիպերում իրավունքի կենսագործում հասկացությունն ունի նեղ, սահմանափակ իմաստ և նշանակում է պաշտոնապես գոյություն ունեցող, գործող դրական իրավունքի կենսագործում հասարակական իրավական հարաբերությունների սուբյեկտների վարքագծում՝ օգտագործման պահպանման, կատարման և կիրառման միջոցով: Մինչդեռ իրավահասկացողության իրավաբանական, բովանդակային (նաև խառը), իդեալիստական, մետաֆիզիկական տիպերում, բացի վերը նշված իմաստով իրավունքի կենսագործումից, առաջ է գալիս խնդիր, որը ևս ընդգրկված է «իրավունքի կենսագործում» հասկացության տիրույթում, այն է՝ իրավունքը որպես գաղափար, ինչ-որ սկզբունք, օբյեկտիվ էություն կենսագործել իրավական ձևերում (պաշտոնական) աղբյուրներում և հետո միայն իրավունքի սուբյեկտների իրական իրավական վարքագծում: Իրավաբանական դրականությանը բնորոշ իրավական մտածողությունը նույնացնելով օրենքը (օրենսդրությունը) և իրավունքը, իրավունքի կենսագործումը հանգեցնում է միայն դրական ձև ունեցող իրավական դրույթների կենսագործմանը (իրականացմանը):

2. Մարդու գոյությունը և էությունն ունեն երեք անխզելի կողմեր՝ կենսաբանական, հասարակական և իդեալական: Այսպիսի փիլիսոփայական մոտեցման դեպքում մարդկային հասարակության իրավական համակարգի կայացումը սկզբնավորվում է իրավական իդեալից (ծրագրից, տեսությունից), անցնելով դրականացման (պոզիտիվացման) գործընթացը՝ վերածվում է նորմատիվ-պաշտոնական ձև ունեցող իրավական պահանջների (տեքստի): Իդեալն իր իրականությունն ու պաշտոնական ամրագրումն է ստանում իրավունքի դրական ձևերում, սակայն նորմատիվ ձև ունեցող անհրաժեշտության վերածված այդ իդեալը՝ որպես պիտոյ, դեռևս չիրացված հնարավորություն է: Հետևաբար, իրավական համակարգի շար-

Ժումը, գործողությունը պետք է շարունակվի իրավական նորմատիվ ձևը կյանքում կենսագործելու և դրանով իսկ իդեալն իրականություն դարձնելու համար: Շարժման այս ամբողջ շղթան իրավունքի կենսագործողությունն է, որի վերջնական նպատակը հասարակական կյանքում իրավական իդեալին (կամ իրավունքի օբյեկտիվ էությանը) համապատասխանող իրավակարգի հաստատումն է:

3. Իրավահասկացողության ձևական, նորմատիվիստական, օրենքական (լեգիստական) տիպերում իրավունքի կենսագործում հասկացությունն ունի նեղ, սահմանափակ իմաստ և նշանակում է պաշտոնապես գոյություն ունեցող, գործող դրական իրավունքի կենսագործում հասարակական իրավական հարաբերությունների սուբյեկտների վարքագծում՝ օգտագործման պահպանման, կատարման և կիրառման միջոցով: Մինչդեռ իրավահասկացողության իրավաբանական, բովանդակային (նաև խառը), իդեալիստական, մետաֆիզիկական տիպերում, բացի վերը նշված իմաստով իրավունքի կենսագործումից, առաջ է գալիս խնդիր, որը ևս ընդգրկված է «իրավունքի կենսագործում» հասկացության տիրույթում, այն է՝ իրավունքը որպես գաղափար, ինչ-որ սկզբունք, օբյեկտիվ էություն կենսագործել իրավական (պաշտոնական) ձևերում, աղբյուրներում և հետո միայն իրավունքի սուբյեկտների իրական-կենսական իրավական վարքագծում: Իրավաբանական դրականությանը բնորոշ իրավական մտածողությունը նույնացնելով օրենքը (օրենսդրությունը) և իրավունքը, իրավունքի կենսագործումը հանգեցնում է միայն դրական ձև ունեցող իրավական դրույթների կենսագործմանը (իրականացմանը): Իրավունքի և օրենքի տարբերակման վրա կառուցված իրավամտածողությունը տարանջատելով իրավունքը և օրենքն իրավական կարգավորման համակարգի առջև դնում է նոր խնդիր՝ պաշտոնականացնել, այսինքն՝ դրական օրենսդրության ձևով արտահայտել միայն իրավունքը (դրա էությունը, սկզբունքը, գաղափարը) և դրա օբյեկտիվ պահանջները:

4. Իրավունքի և օրենքի տարբերակման հայեցակարգի տեսանկյունից «իրավունքի կենսագործում» հասկացությունը ձեռք է բերում նոր բովանդակություն, ինչպես նաև ի հայտ են գալիս իրավունքի իրականացման նոր ձևեր: Արդյունքում տեսական հնարավորություն է առաջանում հիմնավորելու նոր իրավական հասկացության առկայությանը, այն է՝ **«իրավունքի կենսագործման իրավաբանական կառուցակարգ»**, որի բաղադրատարրերն են իրավունքի (էության) վերածումը դրական իրավունքի (ձևի) և դրական իրավունքի կենսագործումը հասարակական հարաբերություններում: Իրավունքի նման կերպով պատկերված կենսագործումը տարբեր երկրներում տեղի է ունենում տարբեր կերպ՝ պայմանավորված երկրի իրավական համակարգի առանձնահատկությունների հանրագումարով:

5. Իրավունքի կենսագործման միասնական կառուցակարգի առաջին բաղադրամասն իրավունքի (որպես օբյեկտիվ էության, սկզբունքի կամ իդեալի) պահանջները դրական իրավունքի վերածվելու, դրանց պաշտոնական նորմատիվ ձև տալու կառուցակարգն է, որի իրականացման ձևն իրավաստեղծագործությունն է: Իրավունքի ձևականացման կառուցակարգը միասնական, բարդ, փուլային գործընթաց է: Իրավունքի ձևականացման փուլերի առանձնացման չափանիշը կոնկրետ իրավական համակարգում իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգային ստորակարգությունն է: Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի օրինակով՝ հիմք ընդունելով մասնավոր իրավունքի ոլորտում իրավունքի ներպետական աղբյուրների ըստ իրավաբանական ուժի ստորակարգությունը (<< Սահմանադրությունը, սահմանադրական դատարանի որոշումները, օրենսգրքերը և մասնավոր իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքները, ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը), իրավունքի կենսագործման իրավաբա-

նական գործընթացում կարելի է առանձնացնել երեք փուլեր՝ այն է՝ սահմանադրումը, օրենսդրումը և ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը: Իրավական կարգավորման մի շարք ոլորտներում իրավունքի ձևականացման իրավական կառուցակարգը սահմանափակվում է սահմանադրմամբ, օրենսդրմամբ և ենթաօրենսդրական իրավաստեղծ գործունեության ձևով: Ընդ որում կան իրավունքի ճյուղեր, որոնցում իրավունքի ձևականացման կառուցակարգը ենթադրում է միայն սահմանադրումը և օրինաստեղծագործությունը: Քաղաքացիական իրավունքի ոլորտում իրավունքի որպես էության կենսագործման կառուցակարգը ենթադրում է իրավունքի գրեթե բոլոր նորմատիվ ձևերը և դրան ավելացրած նաև իրավական կարգավորման միջոցները, ինչի հետևանքով իրավունքի կենսագործման կառուցակարգն այստեղ էականորեն տարբերվում է քրեական իրավունքի ոլորտում իրավունքի կենսագործման կառուցակարգից: Քաղաքացիական իրավունքի ոլորտում իրավունքի էության կենսագործումն իրավունքի ձևականացման միջոցով տեղի է ունենում սահմանադրմամբ, օրենսդրմամբ, ենթաօրենսդրական իրավաստեղծագործությամբ: Դրանց արդյունքում ստեղծված և գործող օրենսդրության մեջ առկա իրավական կարգավորման բացը կարող է լրացվել, կոնկրետացվել իրավական սովորույթի կիրառման միջոցով:

6. Հանրային (պետական) մարմինների կողմից անհատական իրավական կարգավորումը մայրցամաքային իրավունքի համակարգում հանգում է իրավաբանական անալոգիայի ինստիտուտին և դատական նախադեպի հիմնահարցին: Իմաստավորելով իրավաբանական անալոգիայի տեղն իրավունքի կենսագործման կառուցակարգում, գալիս ենք եզրակացության, որ ռոմանագերմանական իրավական համակարգերում իրավունքի կենսագործման գործընթացն անցնում է մի շարք փուլերով: Առաջին հերթին տեղի է ունենում օրենքից տարբերակված իրավունքին (բնական, ազատական-իրավաբանական կամ այլ կերպ հասկացված) նորմատիվ համապարտադիր ձև, ուժ տալու գործընթաց, որի իրականացման ձևը իրավաստեղծագործությունն է: Սահմանադրումը և օրինաստեղծագործությունը իրավունքի ձևականացման-կենսագործման գործընթացի առաջին կառուցակարգն են: Դրանից հետո իրավունքի ձևականացման գործընթացը չի ավարտվում, այլ սկսվում է երկրորդ ընթացակարգային փուլը՝ ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունումը: Այս գործընթացի արդյունքում կոնկրետացման ձևով կենսագործվում է օրենքներում արտահայտված իրավունքը: Դրանից հետո սկսում է գործել դրական (պոզիտիվ) իրավունքի (օրենսդրության) իրականացման կառուցակարգը՝ տարբեր ենթաձևերով: Այս վերջին կառուցակարգի գործողության արդյունքում իրավունքը կենսագործվում է իրավունքի սուբյեկտների վարքագծում և իրավական կարգավորումը հասնում է իր նպատակին: Սակայն օրենքները և ենթաօրենսդրական ակտերը կարող են ունենալ բացեր, որի պատճառով առաջանում է իրավունքի էության կոնկրետացման և կենսագործման խնդիր: Բնական իրավունքը, իրավունքը փիլիսոփայական իմաստով չի կարող լինել բաց, այն անբաց է: Օրենսդրության բացի առկայության դեպքում իրավունքի կենսագործման (իրականացման) խնդիրները լուծվում են բացերի լրացման այնպիսի ձևերով, ինչպիսիք են՝ բացի վերացումն իրավաստեղծագործության միջոցով և բացի հաղթահարումն իրավաբանական անալոգիայի միջոցով: Հետևաբար, իրավունքի էության կոնկրետացման գործընթացի հաջորդ աստիճանն իրավունքի բացերի լրացումն է անալոգիայի միջոցով՝ համապատասխան պետական մարմինների՝ հիմնականում դատարանների կողմից: Միայն այս գործընթացների ավարտից հետո խոսքը կարող է գնալ իրավունքի, ավելի ճիշտ է ասել՝ գործող դրական իրավական նորմերի իրականացման մասին՝ համապատասխան ձևերով:

7. Կախված դատական նախադեպերի տեսակներից՝ դասական-իրավաստեղծ և մեկնաբանողական, դրանք տարբերվող դեր են խաղում իրավունքի կենսագործման համակարգում: Իրավաստեղծ նախադեպերը տեղավորվում են իրավունքի կենսագործման առաջին կառուցակարգում՝ իրավունքի ձևականացման, իրավաստեղծագործության կառուցակարգում՝ որպես իրավունքի էության արտացոլման եղանակներից մեկը: Հայաստանի իրավական համակարգում դասական նախադեպն առկա է միայն իրավունքի անալոգիայի դեպքում: Դատարանն իրավաստեղծ նախադեպի միջոցով ամրագրում է իրավունքի՝ իր կողմից հասկացված էությունը: Այս դեպքում իրավունքի էության կենսագործումը նախադեպային ձևում և դատական իրավակիրառումը սերտաճած են, իրավակիրառման ընթացքում ստեղծված անհատական կանոնը ձեռք է բերում նորմատիվ նշանակություն հետագա դեպքերի համար: Մեկնաբանողական նախադեպերն իրավունքի ածանցյալ աղբյուրներ են, որովհետև իրավունքի կենսագործման-կիրառման գործընթացում իրավագոր սուբյեկտն օրենքի հիման վրա կոնկրետացնելով օրենքի դրույթները՝ միասնականացում է դրա կենսագործման կարգը: Մեկնաբանողական նախադեպը չի ստեղծում իրավունք (իրավունքի նորմ), այլ մեկնաբանում է օրենքով ամրագրված իրավունքի ընդհանուր, վերացարկված կանոնը՝ անհատական որոշակի անձանց և դեպքերի վերաբերյալ: Այս տեսակի նախադեպն իրավաստեղծագործության կառուցակարգում համարվում է օրենքը կոնկրետացնող իրավակիրառում, որն ունի ենթաօրենսդրական նշանակություն:

8. Դրական իրավունքի իրականացումը կարելի է բնորոշել որպես իրավունքի, դրա էությունն արտահայտող իրավական սկզբունքների, իրավական նորմերի համակցության կենսագործումն է, որը տեղի է ունենում իրավունքի սուբյեկտների փաստական իրավաչափ վարքագծի միջոցով, ինչպես նաև իրավախախտողների նկատմամբ իրավական պատասխանատվության միջոցների կիրառմամբ:

9. Իրավունքի և օրենքի տարբերակմամբ կառուցված իրավագիտության դիրքերից իրավունքի իրականացման կառուցակարգի օբյեկտն են իրավունքը և դրա էությունն արտահայտող իրավական սկզբունքներն ու իրավական նորմերը, որոնք իրականացվում են իրավունքներով օժտված և իրավական պարտականություններ կրող իրավունքի սուբյեկտների փաստական իրավաչափ վարքագծում կենսագործմամբ, իսկ իրավախախտումների դեպքում իրավախախտների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառմամբ: Իրավունքի իրականացումը որպես գործընթաց ենթադրում է ոչ միայն իրավական նորմերի կենսագործում փաստական իրավաչափ վարքագծում, այլ նաև համապատասխան ինստիտուտների կիրառմամբ իրավունքի էության, սկզբունքի գաղափարի (իդեայի) անմիջական, ուղղակի կենսագործում նորմատիվ կարգավորման բացակայության դեպքում կամ իրավունքից շեղված նորմերի վերացում, փոփոխում, լրացում՝ իրավունքի էությունն իր դրսևորման մեջ դարձնելով ամբողջական, համապատասխանող: Իրավունքի իրականացման արդյունքը ոչ միայն օրենսդրի կողմից նորմերում դրված մասնավոր նպատակի կենսագործումն է, այլ նաև իրավունքի որպես էության և սկզբունքի կենսագործումը: Իրականացման գործընթացում գլխավորն իրավունքի կենսագործումն է (օբյեկտիվ կողմ), սակայն սուբյեկտիվ կողմի գործոնները կարող են իրավունքի իրականացումը սովորական հունից տեղափոխել իրավական կարգավորման նորմատիվային հիմքի վերանայմանը՝ հասնելով իրավունքի էության առավել լրիվ և համապատասխանող դրսևորմանը՝ նորմատիվ-դրական նոր կարգավորման պաշտոնական ընդունման միջոցով:

10. Դրական իրավունքի նորմերի իրականացումը տեսակների ու ձևերի դասակարգման հիմնահարցի տեսական վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու,



որ իրավունքի տեսության մեջ առաջ քաշված իրավունքի իրականացման ձևերի դասակարգումները (ըստ իրավունքի սուբյեկտների միջև իրավական կապի բնույթի (ընդհանուր և կոնկրետ իրավահարաբերություններ), ըստ իրավաիրականացման սուբյեկտային կազմի՝ (անհատական և կոլեկտիվ), ըստ իրավունքն իրականացնող սուբյեկտների իրավական կարգավիճակի (քաղաքացիաիրավական և վարչաիրավական ձևեր), ըստ արտաքին դրսևորման (ակտիվ և պասիվ ձևեր), ըստ ներգործության օբյեկտի՝ կամավոր և հարկադիր իրավաիրականացման ձևեր), բոլորն էլ ընդունելի են միայն մեկ պայմանով, որ դրանք պետք է պատկերացնել որպես իրավահարաբերությունների միջոցով իրավունքի իրականացում: Հակառակ տեսակետը հակասության մեջ է մտնում իրավահարաբերությունների տեսության հետ, ըստ որի ընդհանուր իրավահարաբերությունները ծագում են անմիջապես օրենքից: Հետևաբար, իրավունքի իրականացումը գործընթաց է, որն ընթանում է միայն իրավահարաբերությունների միջոցով: Իրավահարաբերություններից դուրս իրավունքի իրականացման տեսակետի կողմնակիցները շփոթում են իրավական ներգործություն (իրավունքի ազդեցություն), իրավաչափ վարքագծի շարժառիթներ հասկացություններն իրավունքի իրականացում հասկացության հետ: Այս հայեցակարգում պետք է պատկերացնել նաև իրավունքի իրականացման դասական բաժանումը (ըստ իրավունքը և դրա նորմերն իրականացնող գործողությունների բնույթի)՝ երեք անմիջական ձևերը (օգտագործում, պահպանում, կատարում) և մեկ միջնորդավորված ձևը՝ իրավունքի կիրառումը:

11. Դրական իրավունքի իրականացման կառուցակարգը միասնական և միօրինակ գործընթաց չէ: Այդ հատկությունից ելնելով այն անհրաժեշտ է տրոհել երկու կառուցակարգի՝ ա) իրավունքի իրագործման (իրավաիրագործման) կառուցակարգ, որը ներառում է իրավունքի իրականացման երեք անմիջական ձևերը՝ օգտագործումը, կատարումը, պահպանումը, բ) իրավունքի կիրառման (իրավակիրառման) կառուցակարգ, որն ի տարբերություն նախորդի հանրային (պետական) գործունեության տեսակ է, իշխանական լիազորություններով օժտված մարմնի միջոցով իրավունքի իրականացում:

12. Իրավունքի կիրառման հատկանիշների, անհրաժեշտության, գործառույթների հիմնահարցերի տեսական վերլուծությունն իրավունքի կենսագործման հայեցակարգի և իրավունքի գերակայության սկզբունքի դիրքերից հիմք է տալիս հանգելու հետևյալ եզրակացությանը. իրավունքի իրականացման կառուցակարգում (իր չորս ձևերով) և հատկապես իրավակիրառման դեպքում կարևոր է իրավունքի էության կենսագործման խնդիրը: Հենց իրավակիրառման ընթացքում են հայտնաբերվում իրավական կարգավորման բացերը, կայացվում են նախադեպերը, պարզվում է իրավունքի պաշտոնական ձևերի ոչ իրավականությունը, այսինքն՝ շեղումներն իրավունքից, մարդու իրավունքներից, Սահմանադրությունից: Հետևաբար, իրավունքի կիրառման անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել նորմատիվ (օրենսդրական) կարգավորման բացով, արդեն առկա դրական իրավական նորմերի հակաիրավականությամբ: Իրավակիրառման ընթացքում անցկացվում է իրավական կարգավորման նորմատիվ մոդելի փորձաքննություն, որը ենթադրում է ոչ միայն պոզիտիվ իրավական նորմի ընտրություն և իրավական որակում, այլ նաև նորմի արժեքաբանական, գնահատողական փորձաքննություն իրավականության չափանիշով, իրավունքի էությանը, սկզբունքին, գաղափարին համապատասխանության տեսանկյունից: Այդ արժեքաբանական գործընթացը ենթադրում է իրավունքի ձևում ամրագրված նորմի և իրավունքի էության, սկզբունքի համադրում և համեմատություն: Հետևաբար, իրավունքի կիրառման հատկանիշ է այն, որ դրա ընթացքում շարունակվում է նորմատիվ կարգա-

վորման գործընթացը, որը սկսվել էր նախորդող՝ իրավաստեղծագործության կառուցակարգում, սակայն կարիք ունի լրացման (անալոգիայի միջոցով, նախադեպի կայացման միջոցով) կամ էլ կատարելագործման՝ դատական բողոքարկման միջոցով: Իրավունքի կիրառման գործընթացը, դրա վերաբերյալ տեղեկույթն առաջ է բերում նոր իրադրություններ, որոնց համապատասխան տեղի է ունենում նորմատիվ մոդելի ճշգրտում, կատարելագործում, լրացում: Ուստի իրավակիրառումն իրավաապահովող նշանակություն ունի ոչ միայն իրավունքի իրականացման անմիջական ձևերի համար, այլ նաև իրավաստեղծագործության ձևով իրավունքի կենսագործման կառուցակարգի համար: Իրավունքի կիրառման օբյեկտ է ոչ միայն նորմը, այլ նաև իրավունքը, իսկ իրավակիրառման գործառույթներից է նաև իրավունքի նորմերն իրավականության դիրքերից արժեքաբանական վերլուծության ենթարկելը: Հետևաբար, իրավունքի կիրառման սկզբունք է ոչ թե ձևական օրինականությունը, այլև իրավական օրինականությունը:

Իրավակիրառման որպես հանրային (պետական) իշխանական գործունեության համար հիմնարար սկզբունք է իրավունքի գերակայությունը: Իրավակիրառման կառուցակարգում առկա են ինստիտուտներ, որոնք ուղղակիորեն, անմիջականորեն նպատակամղված են իրավունքի էության կենսագործմանն այն դեպքերում, երբ նորմատիվ կարգավորման մոդելի իրավաչափությունը կասկածելի է կամ էլ, երբ իրավակիրառողն առանց կարգավորման մոդելի (նորմի) անմիջապես, ուղղակի կիրառում է իրավունքն՝ անհատական կարգավորում տալով դեպքին իրավաբանական անալոգիայի միջոցով կամ դատական նախադեպային իրավաստեղծագործության միջոցով:

13. Իրավակիրառական գործունեությունը հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունն է՝ ուղղված անհատական իրավաբանական գործերի քննությանը և լուծմանը, նորմատիվ ակտերի դրույթների (օրենքների) կենսագործմանը, որն ավարտվում է անհատական իրավական ակտի ընդունմամբ: Իրավակիրառման տեսակներն են՝ գործադիր իրավակիրառումը (իրավագործադրումը), իրավապահպանությունը (ներառյալ՝ դատական), վերահսկողական-հսկողական իրավակիրառական գործունեությունը, մեկնաբանողական իրավակիրառական գործունեությունը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են **հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Իրավական կարգավորման համակարգում իրավունքի կենսագործման հիմնախնդրի փիլիսոփայական պատկերացումը, Արդարադատություն, թիվ 4(15), Եր., դեկտեմբեր, 2011, 22-25 էջերը,

2. Իրավունքի իրականացման տեսակների և ձևերի հիմնախնդիրները, Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրները, Գիտական աշխատանքների ժողովածու, Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ, Գիրք 4, Եր., «ՕՐ-ԴԱՐ» հրատ., 2012, 72-85 էջեր,

3. Իրավունքի կենսագործման տեսության ձևավորման և կայացման պատմությունը և արդի հայեցակարգերը, Օրենք և իրականություն, թիվ 2(196), Եր., փետրվար, 2012, 4-7 էջերը:

4. Իրավունքի կիրառման որպես իրավունքի իրականացման հատուկ ընթացակարգի և ձևերի դասակարգման հիմնախնդիրները, Արդարադատություն, թիվ 2(21), Եր., հունիս, 2013, 77-82 էջերը:

**РЕЗЮМЕ**  
**ДАВТЯН НАРИНЕ ГАРНИКОВНА**

**ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРИКЛАДНЫЕ ПРОБЛЕМЫ  
ПРЕТВОРЕНИЯ (РЕАЛИЗАЦИИ) ПРАВА**

В диссертации подвергается многостороннему изучению понятие «реализация права», рассматривая ее в поэтапной структуре правового урегулирования и правопонимания. В результате разработана концепция реализации права созвучно с современными правовыми реалиями.

В работе была произведена классификация концепций теории реализации (осуществления) права, были выявлены недостатки и преимущества, присущие каждой из них, были отмечены пути решения основных проблем реализации права, при помощи которых было осуществлено изучение понятия реализации права. На основании этого изучения была предложена концепция реализации права, построенная на разделении права и закона. Обсуждение проблемы на этой плоскости является научной новинкой, оно обогащает теоретические понятия о реализации (осуществлении) права.

Автор по-новому рассматривает понятие о «реализации права» с точки зрения концепции дифференциации права и закона и, путем теоретических обоснований, предлагает новое правовое понятие – **«юридический механизм претворения права»**, составными элементами которого являются превращение права (сути, или принципа, или идеи) в позитивное право (форму) и реализация позитивного права в общественных отношениях.

Первой составной частью единого механизма реализации права (в качестве объективной сути, принципа, или идеи) является превращение требований права в позитивное право и предание им нормативной формы, а путь осуществления этого – правотворчество. По примеру правовой системы РА, беря за основу систему внутригосударственных источников права, в сфере частного права, автор выделяет три этапа в правовом процессе оформления права: конституирование, законотворчество и подзаконное правотворчество.

За механизмом формирования права (превращения в позитивное право) следует механизм реализации позитивного права, законодательства.

Механизм реализации позитивного права делится на два подмеханизма, элемента:

1) механизм осуществления права, который включает три непосредственные формы реализации права: использование, исполнение, сохранение,

2) механизм применения права (правоприменения).

С позиций понятия правовой законности предлагается новый признак применения права: в механизме правоприменения продолжается процесс нормативного урегулирования, начавшийся в предыдущем механизме:

правотворчестве, но нуждающийся в дополнении (посредством аналогии или вынесения прецедента), или же усовершенствования путем судебной жалобы.

Видами правоприменения являются: исполнительное правоприменение, правоохранительная (в том числе и судебная), надзорно-контрольная, а также толковательная деятельность. Исполнительное правоприменение, как форма применения права, имеет правообеспечивающее значение.

Правоохраняющая форма правоприменения (включая и правосудия) связана с правовым спором или с правонарушением. Официальное нормативное толкование осуществляют предусмотренные законом публичные органы на основании заявления заинтересованных субъектов, без правоприменения конкретизируя положения конституции или иных актов.

В процессе правоприменения проводится экспертиза нормативной модели правового регулирования, подразумевающая не только выбор позитивной правовой нормы и квалификацию, но и оценивающую, аксиологическую экспертизу нормы с точки зрения соответствия к правовой сути, принципа и идее. Этот оценивающий процесс подразумевает сопоставление или сравнение закрепленных в правовой форме нормы и правовой сути, или принципа, или идеи. Следовательно, признаком применения права является то, что его процессе продолжается процесс нормативного урегулирования, начавшийся в предыдущем механизме: правотворчестве, но нуждающийся в дополнении (посредством аналогии или прецедента), или же усовершенствования.

С позиций юриспруденции, построенной на дифференциации права и закона, объектами механизма реализации права являются право и выражающие его суть правовые принципы и правовые нормы, которые реализуются осуществлением фактического правового поведения субъектов права, наделенных правами и являющимися носителями правовых обязанностей, а в случае правонарушений, применением средств мер ответственности к правонарушителям.

Реализация права, как процесс, подразумевает не только осуществление правовых норм в фактическом правовом поведении, но и непосредственной, прямой реализации сути, принципа, идеала права в случае отсутствия нормативного урегулирования, или отмену норм, отклонившихся от права, их изменение, дополнение, через применение соответствующих институтов делаая суть права целостным и соответствующим в ее проявлении. Результат реализации права не только в осуществлении частной цели, включенной в норму законодательной властью, но и в осуществлении права, как сути и принципа.

## RESUME

### DAVTYAN NARINE GARNIK.

#### THEORETICAL AND PRACTICAL ISSUES OF LAW REALIZATION

In this proposal there are described about law implementation issues and concepts which focused on the legal and regulatory structure determination and the implementation of the law has been developed in line with the realities of modern legal Concept:

The work is done in the "law realization" (the) theory of concepts classification, since each of them is removed from the inherent disadvantages and advantages are formulated. Here are the guidelines for the implementation of a number of problems of theory, which is the realization of the idea of a survey and carried out to study the proposed law.

The ideas are built on the concept of separation of law and the implementation of the problem on the plane, discussions of scientific innovation, developing the correct implementation (execution) of the theoretical ideas.

Differentiation in terms of the concept of law and the author of a new profile "to bring to life" concept and theoretical arguments suggest a new legal concept of "developing the right implementation of the law," which components the right (in fact or principle or idea) into positive law (the form) and the implementation of positive social relations.

Common mechanisms for the implementation of the first component of the right to the right (as an objective fact, principle or idea) requirements into positive law, in the form of a formal regulatory system which is implemented in the legal system, based on private law and domestic law, according to legal sources. Under the force, the implementation of the legal rights of the author could be singled out the three-stage process, prescribed by the legislature, sub legislation.

Mechanism of implemenatiopn of the law is divided into two mechanisms:

- a) implementation of the law;
- b) enforcement of the law.

For the legal position of the concept of the rule of law, proposed to use the

new feature. law enforcement during the ongoing regulatory process that had begun earlier, the realization mechanisms, however, needs to be filled (by analogy, precedent-making through) or the improvement of judicial appeal through law enforcement types, executive implementation, law protection (including judicial ), control, and explorative activities. This could be used as a form of law enforcement, without implementation.

Law enforcement during an investigation conducted by the normative legal regulation, which implies not only the choice of positive law and legal quality but also the norm evaluation, evaluative expertise criterion, the essence, the principle idea in terms of compliance with the law assumes the form set out in and a rule of law or the principle of comparison and comparison and therefore the quality of law enforcement is that it will continue in the regulatory process that had begun earlier,law control mechanisms, however, needs to be filled (by analogy, precedent-making through) or improvement judicial appeal.

Through the differences of law and the jurisprudence of the institutional position of the object and the right to express the essence of the legal principles and legal norms, which are endowed with the rights and obligations of a legal entity the right to factual implementation unlawful conduct, and violations of the sanctions against offenders using the Law. The process involves not only the factual and legal norms fulfillment of legitimate behavior, but also the use of the institutions of the law, the principle of the idea immediate and direct realization of the right to statutory regulation in the absence or elimination of distorted norms, modification, amendment, a manifestation of the essence of the right to complete, in accordance with the outcome of legal norms laid down by the legislature implementation particular purpose, but also as a matter of law and the principle of implementation.